

# ՆՈՐ ԿԵԱՆՔ



ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՊԱՂՏԱՏԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Պաղտատի գծին խնդիրը որ հիմա Պոլիս մեծ կարևորութիւն ստացած է, Արեւելքի գործերուն վրայ հզօրապէս ազդելու սահմանուած կը թուի: Ռուսելթիւրք պատերազմէն քանի մը տարի առաջ անգլիական զբաւաւտակներու ընկերութիւն մը կը հետամտէր Պոլսէն Պաղտատ երկաթուղիի շինութեան մենաշնորհը ստանալ: Թիւրք շրջանակները շատ նպաստաւոր էին անգլիական ծրագրին. ու ան առեն ընդհանուր կարծիք մը տիրուած տեղ թէ Ռուսիա պիտի չթողարէ երկաթուղիի մը միջոցաւ ասիական թիւրքիոյ անգլիացումը: ամէն տեսակ դժուարութիւն պիտի յարուցանէ այսպիսի խորհուրդ մը անզործադրութեան դատապարտելու համար, եւ մինչեւ իսկ ի հարկին ո՛ր եւ է պատրուակաւ թիւրքիոյ հետ պատերազմելու պիտի չվարանի: Աւարտեալ քանի մը տարի ետքն ալ ռուսելթիւրք պատերազմը ծագելով Պաղտատի երկաթուղիին շինութեան խնդիրը ա՛լ բոլորովին մոռցուեցաւ: Անշուշտ կարելի չէ ըսել թէ թիւրքիոյ եւ Ռուսիոյ կողմէն պատերազմի յայտարարութիւնը Պաղտատի գծին շինութեան միայն վերագրելու է, բայց այդ խնդիրն ալ իր ազդու կարեւորութիւնը ունեցած է Ռուսիոյ նկատումներուն մէջ: Եւ հիմակ որ Պաղտատի երկաթուղիներուն շինութեան խնդիրը օրուան մեծ մտազբազումն է Պոլիս թէ Երջաղի եւ թէ զետպանական շրջանակներու մէջ, Ռուսիա շատ նեղացած կը թուի եւ կը պատրաստուի, օրագիրներու հրատարակութեանց նայելով, թող չտալ որ Գերմանիա կամ Անգլիա եւ կամ անգլո-գերման միաբանութիւն մը Պոլսէն Պաղտատ երկաթուղի շինելու արտօնութիւն ստանայ: Էտիսպուրի Ռիվիուէն առնելով օգոստոս 1ի Նոր կեանքին մէջ կը գրէինք հետեւեալը. «Ժամանակին ընթացքով, թերեւ, քաղաքական շարժումներ, նման անոնց որոնք Չինաստանի երկաթուղիներուն մասին համաձայնութիւն մը առաջ բերին պետութեանց միջեւ, մզին Անգլիան եւ Գերմանիան որ միաբանին եւ երկաթուղիի ծրագիր մը ի գործ դնեն՝ երկուքին միահաղօյն հսկողութեան ներքեւ: Այս մեծ ձեռնարկին մէջ, Արեւելքեան կամ Անաստուրի մասը բնականաբար Գերմանիոյ

բաժին պիտի իյնայ, մինչդեռ Միջագետքի կամ Պարսկաստանի ճիւղերը՝ Անգլիոյ պիտի մնան, որուն զինուորական եւ նաւային խարխուր Հնդկաստանի եւ Պարսից ծոցին մէջ կը գտնուի: Բայց ասիկա բոլորովին նոր էջի մը բացումը պիտի բլլայ Արեւմտեան Ասիոյ մէջ:»

Այսպիսի ձեռնարկի մը յաջողութեան հաւանականութիւնը Ռուսերուն միտքը կը խոսովէ: Թիւրքիան սկարացընելով տկարացնելով վերջնապէս կործանելու եւ գրաւելու դարաւոր համբերատար քաղաքականութիւնը մեծ վտանգի մէջ է: Երկաթուղիներու շինութեամբ թիւրքիոյ ժողովուրդներուն նիւթական կացութիւնը պիտի լաւանայ, երկրին վարչութիւնը հետզհետէ պիտի բարւոյցի Անգլիոյ եւ Գերմանիոյ միջամտութեամբ, ու թիւրքիոյ պիտի բնականաբար զօրանայ: Անգլիոյ մէջ կը կարծուի թէ «հիւանդ մարդը» զեռ շատ ու շատ կրնայ սպառել երբ երկու մեծ պետութիւն, ինչպէս Անգլիա եւ Գերմանիա, երկաթուղիներու պատճառաւ իրենց հզօր պաշտպանութեանը ներքեւ առնեն օսմանեան պետութիւնը, եւ իրենց շահերուն պահանջումովը զօրացնեն զայն: Միւս կողմէն ալ Պաղտատի երկաթուղին միանգամայն սեղմական կարեւորութիւն պիտի ունենայ: Չանազան ծրագիրներ ներկայացուած են, բայց, ինչպէս նախորդ թուով կ'ըսէինք, «Ապտիւ-Համիտ բնականաբար կետարիա-Պաղտատ ծրագրին կողմնակից է, եւ ի հարկին պիտի ուզէ որ ճիւղ մը շինուի մինչեւ Երզնկա, որ Արեւելեան Անաստուրի զինուորական մեծ կեդրոնն է, ու թերեւ իսկ շարունակուի մինչեւ Էրզրում, որ նազմազիտական ուրիշ կարեւոր կէտ մըն է:»

Թիւրքիա ուրեմն պիտի կարենայ ի հարկին իր բնական շուտով կեդրոնացնել ռուսական սահմանազուխը, մինչդեռ հիմակուան կացութեան մէջ բոլոր առաւելութիւնը Ռուսիոյ կողմն է: Թիւրքիան Էարս երկաթուղիին գիծը աւարտած է, ու Երեւանի գիծն ալ որ գրեթէ մինչեւ թրքական սահմանազուխը պիտի երկարի շատ չանցած կը շինուի: Ռուսիա թիւրքիոյ ամենակարճ ժամանակամիջոցի մը մէջ իր բնական թրքական սահմանազուխը պիտի կրնայ վազցնել, մինչ թիւրքիա բոլորովին աննպաստ պայմաններու մէջ կը գտնուի: Պաղտատի գծին շինութիւնը թիւրքիոյ ամենամեծ առաւելութիւն մը պիտի ընձեռէ պատերազմի մը միջոցին:

Սակաւն եթէ Պաղտատի գիծը մինչեւ իսկ ճիւղա

տրում մը չունենայ դէպի էրզրում, Ռուսիա դարձնալ պիտի ընդդիմանայ փոքր-Ասիան երկաթուղիով զօրացնելու եւ զարգացնելու խորհուրդներուն: Այս տրամադրութեան ակնբերել նշանը կը տեսնենք Բեդրպուրիի Նովոյի Վրեմիա մեծ թերթին մէջ, որ Ռուսիոյ վարիչ շրջանակներուն էն կարեւոր բերանն է: Թունդ պահպանողական թերթը սաստկապէս գրողուած է Անգլիոյ եւ Գերմանիոյ դրամովը փոքր-Ասիոյ մէջ երկաթուղի շինելու ո՛ր եւ է խորհուրդի դէմ, եւ բացարձակապէս կը յայտարարէ թէ փոքր-Ասիոյ մէջ ուսական իրաւունքները շերմապէս պիտի պաշտպանէ:

Լուր տարածուեցաւ թէ Կ. Պոլսոյ ուս պետական Դրան յայտարարած էր որ Ռուսիոյ ախորժիչի չէ փոքր-Ասիա, իր սահմանազլխին մօտ երկաթուղիի գծի մը շինութիւնը տեսնել. Նովոյի Վրեմիա այս լուրին ստուգութեանը կը տարակուսի: Ըստ ուսական թերթին, Չինո-վիէվի կողմէն այսպիսի զեկուցում մը պիտի նշանակէր թէ Ռուսիա չի հակառակիր որ փոքր-Ասիոյ մէջ երկաթուղի մը շինուի, բաւական է որ իր սահմանազլխէն հետու ըլլայ, օրինակի համար Իսկէնտերունէն դէպի Պաղատա գծի մը դէմ ո՛ր եւ է հակառակութիւն չի կրնար ըլլալ: Նովոյի Վրեմիայի կարծիքով այս ճամբուն վրայ շինուած երկաթուղի մը շատ աւելի պիտի հակառակի ուսական շահերուն, «վասն զի ուսական հսկողութիւնէն բոլորովին հետու պիտի ինչայ:»

Այդ թերթը չի բաւականանար միայն ուսական շահերը նկատողութեան առնելով, այլ եւ կը պարզէ ուրիշ տեսութիւն մըն ալ որով միջազգային ինչդիր կ'ընէ փոքր-Ասիոյ երկաթուղիներու շինութեան ինչդիրը: Ո՛ր եւ է երկրի մէջ երբ օտարազգի ընկերութիւն մը կը ստանայ երկաթուղիներ շինելու մենաշնորհը, այդ երկիրը այլ եւս իր անկախութեան ամբողջութիւնը չի պահեր. արդ՝ միջազգային դաշնագրութիւններով թիւրքիոյ հողային ամբողջութիւնը երաշխաւորուած է. ուստի երբ օտարազգի ընկերութիւն մը երկաթուղի շինէ փոքր-Ասիա, այդ գործով իսկ թիւրքիա այլ եւս իր կատարեալ անկախութեանը տէրը չէ, հետեւաբար միջազգային դաշնագրիներն ալ զեղծուած կը համարուին. ու այս պատճառաւ է որ պետութիւններուն մէջ համաձայնութիւն զեո չէ զոյացած Պաղատատի գծին համար:

Նովոյի Վրեմիայի տեսութեամբ Ռուսիա իբր Բարիզի 1856ի դաշնագրին ստորագրող պետութիւն մը մասնակից է միւս պետութեանց թիւրքիոյ վրայ ունեցած ընդհանուր իրաւասութիւններուն, բայց ասոնցմէ զուրս ինքն ալ ուրիշ մասնաւոր իրաւունքներ ունի: Այդ մասնաւոր իրաւունքները կը բղխին պատերազմական տուգանքէն օսմանեան կառավարութեան Ռուսիոյ ունեցած պարտքէն: Երկու պայմանագրութեամբ, մէկը՝ 1882 մայիս 2ին, եւ միւսը 1888 յունիս 22 ին ստորագրուած, թիւրքիա փոքր-Ասիոյ քանի մը նահանգներու ոչխարի տուրքը յատկացուցած է պատերազմական տուգանքի հատուցումին, ու այդ երաշխաւորութիւնն է որ պիտի վստահուի

երկաթուղիներու շինութեամբ թարգմանենք Նովոյի Վրեմիային այս առթիւ դրածները. «Միջագետք տանող երկաթուղիի ո՛ր եւ է զիմ պէտք է փոքր-Ասիոյ մէջէն անցնի, եւ որովհետեւ թիւրքական պատերազմին տուգանքին վճարուած քսաներորդ դարուն վերջնալէն առաջ պիտի չդադրի, հետեւաբար Ռուսիա իրաւունք ունի պահանջելու որ մինչեւ պատերազմական տուգանքին ամբողջակի վճարուած, փոքր-Ասիա երկաթուղի չշինուի, առանց ուսական կառավարութեան հաւանութիւնը ստանալու: Թէ՛ Անգլիա եւ թէ՛ Գերմանիա պէտք չէ որ աչքէ վրիպեն այս իրողութիւնը:»

Պաղատատի գծին շինութեան դէմ ուսական թերթին փաստաբանութիւնները շատ համոզիչ չեն, բաւական բաշկոտուկ կ'երեւին. բայց քաղաքական շահեր պաշտպանելու համար միշտ պէտք չկայ իրաւունքի, արդարութեան, յստակ տրամաբանութեան: Պատերազմ հրատարակելու համար պատրուակն ալ կը բաւէ շատ անգամ: Մենք ուսական թերթին կարծիքները առաջ բերելով կ'ուզենք միայն ցոյց տալ թէ թիւրքիոյ շուրջը երկու համախմբում կայ. երկուքն ալ ո՛չ օսմանեան պետութիւնը կը մտածեն, ո՛չ սուլթանը, ո՛չ թիւրքերը, ո՛չ քրիստոնեայ հպատակները, այլ միայն եւ միմիայն իրենց շահերը. սակայն երկու խումբին շահերը իրարու կը հակառակին, և բնական է որ մենք Հայերս ալ այդ շահերու ընդհարումէն փնտրուինք կամ օգտուինք, մեր խելացիութեանը կամ անխելքութեանը չափին համեմատ: Այդ խումբերէն մէկը՝ Անգլիա եւ Գերմանիա, թիւրքիոյ անտեսական բարգաւաճումին եւ բարեկարգեալ վարչութեան մէջ կրնայ իր շահերուն երաշխաւորութիւնը փնտռել: Միւսը, Ռուսիան, թիւրքիոյ աղքատացումին եւ վատթար վարչութեանը մէջ միայն իր շահերուն ապահովութիւնը կը փնտռէ, եւ ըստ այնմ ալ կը գործէ:

Բնականաբար պիտի ուզէինք գիտնալ Ֆրանսայի յարուածը այս կամ այն խումբին, բայց ֆրանսական կառավարութիւնը վարանսու եւ զգուշաւոր ըլլալու պատճառներ ունի: Իր անտեսական շահերը կը պահանջեն թիւրքիոյ բարգաւաճումին եւ անոր բարեկարգութեանը հետամտիլ, իսկ իր քաղաքական շահերն ալ կը պարտաւորեն զինքը նկատողութեան առնել Ռուսիոյ պահանջումները: Հաւանական է որ Ֆրանսա ընդդիմադրու շահերու համաձայնութեան համար օր մը վճարական ազդեցութիւն բանեցնէ: Առ այժմ Բարիզի դահլիճին արեւելեան քաղաքականութեան մեծ գծերը զեո որոշ չեն տեսնուիր: Կ. Պոլսէն հասած լուրերը հակասական կրնան երեւիլ: Բարիզի կարեւոր թերթերէն ոմանք կը հաւաստեն թէ Պոլիս Գերմանիոյ եւ Ֆրանսայի դեսպանները հիմակ համաձայնութեամբ կը գործեն. տարիէ մը ի վեր էր որ թէ՛ Բարիզի եւ թէ՛ Պերլինի կառավարութիւնները այս արդիւնքը ձեռք բերելու կ'աշխատէին, վասն զի Արեւելքի մէջ Գերմանիոյ եւ Ֆրանսայի շահերը իրարու կը համաձայնին:

Սակայն միեւնոյն ատեն Բեդրպուրիէն կը հաղորդեն թէ ուսական մամուլը շատ ուրախացած է լսելով Կ. Պոլ-

սոյ ֆրանսական զեսպան Պ. Բոնսթանի ազդեցութեան հզօրացումը սուլթանին վրայ: Արդ՝ այդ ազդեցութիւնը եթէ գերմանֆրանսական համաձայնութեան համեմատ ի գործ պիտի դրուի, Բեղրպուրիի եւ Մոսկուայի թերթերը գոհ մնալու պատճառ մը չունին:

Այս մթութեան մէջ մենք առ այժմ՝ միայն դիտող կրնանք ըլլալ, օրը օրին եղելութիւնները ուշադրութեան կ'առնենք, առանց որոշ եզրակացութեան մը յանդիլ կարենալու: Բայց պէտք է համոզուած մնանք թէ Պաղտատի երկաթուղիին խնդիրը իր բոլոր հետեւանքներովը, ու պետութեանց վէճերը կամ համաձայնութիւնները մճուական ներգործութիւն պիտի ունենան հայկական խնդրին վրայ: Անոր համար է որ այս բոլոր գործերը մեր ազգային գործերու շրջանին մէջ կը համարինք:

### ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Կ. ՊՈԼԻՍ

Ե

Վարժապետանոցը 1878ի աշնան բացուեցաւ Վան, չորս տարուան շրջանով մը, ծրագիրը աստիճանաբար գործադրուելու պայմանաւ: Առաջին աշակերտները Վանի թաղային վարժարաններու յառաջադէմներէն առնուեցան քննութեամբ, եւ Արարատեան զիւղական նախակրթարաններէն ալ էն ընդունակները: Ընկերութեան Գործադիր ժողովը Հայաստանի զանազան քաղաքներու ազգային պաշտօնական մարմիններէն խնդրեց մէկմէկ խելացի պատանի վարժապետանոց խրկել. առաջարկութիւնը ընդունուեցաւ եւ աշակերտները սկսան երթալ: Նեստորականներու կաթողիկոսին ու քիւրտ պէյերու հետ բանակցութեանց ձեռնարկուեցաւ երեւելի ընտանիքներու զաւակները վարժապետանոցը առնելու նպատակաւ: Վանի թիւրք Ալայ-պէյը առաջինը եղաւ փափաքող որ իր զաւակը Հայոց վարժապետանոցը ընդունուի. այդ փափաքը որ մեր ծրագիրներուն կատարելապէս կը համապատասխանէր անմիջապէս ընդունուեցաւ: Այսպէս ահա հիմը ձգուեցաւ հաստատութեան մը որ հայ աշխարհին թէ՛ Հայոց, եւ թէ՛ տարբեր կրօնքներու եւ ցեղերու միութեան կեդրոնը պիտի ըլլար, եւ Հայաստանը հայկական մտքով ու ազգեցութեամբ կամաց կամաց պիտի կրթէր եւ զարգացնէր: Ետքէն օր մը երբ անգլիացի թրօթթըը հազարապետը Հայաստան քննական այցելութիւն մը կը կատարէր իր կառավարութեան հրահանգովը, զարմանք յայտնեց որ կ. Պոլսէն ամիս մը հեռաւորութեամբ երկիր մը կարելի եղած է հաստատել վարժարան մը որուն նմանը ոչ թէ ամբողջ Անատոլիոյ այլ եւ ոչ խկ Պոլիս կը գոհուի:

Ինչպէս Արարատեան բոլոր վարժարաններուն նոյն

եւ Վարժապետանոցին վրայ Առաջնորդարանը ո՛ր եւ է իրաւասութիւն չունէր, եւ ժողովրդին կողմէն ալ ո՛ր եւ է թեթեւ միջամտութիւն անընդունելի էր: Անկախութեան այս ծայրայեղ նախանձախնդրութիւնը հայկական բարքերուն համապատասխանող չգտնուելուն, անհատներ ու կուսակցութիւններ սկսան մեքենայել, իրենց ազդեցութիւնը դպրոցէն ներս սպրդեցնելու դիտաւորութեամբ: Հանդրուանէ հանդրուան ապահովաբար այս նըպատակակէտին ժամանելու համար որոշուած առաջին չուկէտը հանձարեղ գիւտ մըն էր, գերազանցօրէն հոգեբանական, ու Վանցիներուն մտքին նրբամտութեանը պատուաբեր: Արգարութեան եւ իրաւունքի մեծ գաղափարներուն դրօշակը պարզած, առաջին յարձակումը ըրին Վանցիներէն ոմանք: Վանի թաղային վարժարաններէն առնուած աշակերտներուն մէկ մասը, կամ թէ մեծ մասը, բարեկեցիկ դասակարգին կը պատկանէին. անիրաւութեան յաղթանակին էր հանրային դրամը յատկացնել հարուստներու դաստիարակութեանը, աղքատը իր արդար իրաւունքէն զրկելով: Այս զրկանքին ամբաստանութիւնը Վանէն հաղորդուեցաւ Պոլիս գտնուող Վանցիներու, որոնք Արարատեանի անգամներէն ոմանց միջոցաւ զայն Ընդհանուր ժողովին ներկայացուցին, առանց ո՛ր եւ է չարամիտ դիտաւորութեան:

Սկզբունքի խնդիր մը ծանրախոհ միճաբանութիւններու քննութեանը ենթարկուեցաւ: Գործադիր ժողովին կողմէն խօսելով թէ՛ մեր եւ թէ՛ Վասպուրականի տեսչութեան համուզումները պարզեցի: Արարատեան ընկերութիւնը բարեգործական մարմին մը չէր, այլ թրքահայատակ Հայաստանի վերածնունդը իրեն կէտ նպատակի առաջադրած հիմնարկութիւն մը. իր բոլոր գործերը թէ՛ իրենց ամբողջութեանը, եւ թէ՛ իրենց մանրամասնութեանցը մէջ այս նպատակին հասնելու տեսակէտէն պէտք է տնօրինուէին: Մեզի անհնարին էր մեր ծրագիրը յաջողցնել խարութիւն գնելով լուսաւորչական, կաթողիկ, աւետարանական Հայերուն միջեւ, խտրութիւն գնելով հայ, ասորի, թիւրք, քիւրտ Հայաստանցիներու միջեւ. նաև խտրութիւնը հայ հարուստի եւ հայ աղքատի միջեւ ամենամեծ վտանգը պիտի ըլլար ընկերութեան խորհուրդներուն առջեւ: Աւելի ընդլայնելով մեր տեսութիւնները յայտարարեցի թէ մենք Հայերս անդադար կը զանգատինք մեր հարուստներուն մտքի եւ բարոյականի տկարութենէն, առանց սակայն հարուստները կրթելու եւ բարոյականացնելու հոգածութեան: Հայ տղայ մը հարուստի զաւակ ըլլալովը ինք հարուստ չի սեպուիր, եւ չունենալով ո՛չ խելահասութիւն, ո՛չ նիւթական կարողութիւն, պարզապէս զոհ մըն իր ծնողքին տգիտութեանը, ուստի աղքատի մը չափ, եւ անկէ ալ աւելի, արժանի է հանրային պթածութեանը: Ու ամէն տղայ իր ծնողքին զաւակն ըլլալէ առաջ իր ազգին զաւակն է, եւ իր ազգութեան ապագան: Այդ տղուն գաւառիարակութիւն տալով ո՛չ միայն ազգային մարդասիրական պարտականութիւն մը կատարած կ'ըլլանք այլ եւ ազգային շահերը ապահոված: Վանցի հարուստներուն

տղաքը օր մը Վանի հարուստները պիտի ըլլան, ուստի եւ երկրին տնտեսական ուժին տէրը. ու երբ ազգային քաջաոգիչ պատերազմականութեամբ կրթուած են, այլապէս օղտակար կ'ըլլան ազգին, քան եթէ ազէտ ու անկիրթ մտացած ըլլային:

Այս տեսութիւնները Գործադիր ժողովին կողմէն իբր սկզբունքներ պարզուեցան, առանց գիտնալու թէ Վարժապետանոցին աշակերտներէն ո՛րքանը հարուստ, ո՛րքանը միջին, ո՛րքանը աղքատ դասակարգին կը պատկանէին: Ամենքն ալ ընդունուած էին մտաւորականի եւ ոչ թէ նիւթականի քննութեամբ:

Ժողովը միաձայն վաւերացուց այս սկզբունքները: Վարժապետանոցին ուղղութիւնը կը մնար անփոփոխ եւ տեսչութեան իրաւունքը անձեռնմխելի:

Քիչ ետքը սակայն Վարժապետանոցին գործերուն միջամտութեան նոր փորձ մըն ալ եղաւ: Պ. Փորթուզալեան 1879ին Եւզոկիա գացած ըլլալով փոխ-տեսչութիւն մը թողած էր Վան. եւ ահա օր մը Վանէն նստակ մը կը ստանանք կարեւոր դիրք ունեցող եւ միանգամայն Արարատեանի անդամ վանեցի անձնաւորութիւնէ մը որ կը ծանուցանէր թէ Վարժապետանոցին տեսչութեան եւ ուսուցիչներուն միջեւ անհամաձայնութիւններ էին ծագած, ու ինքը ամենքն ալ իր սունը հրաւիրելով հաշտարար կարգադրութեանց միջոցաւ երկու կողմն ալ գոհացուցած, եւ այսպէս՝ ամէն անհաճոյ գէպքերու պատահականութիւնը արգիլած էր: Այս տեղեկագրութեան պատասխանը թէ՛ նստակագրին եւ թէ՛ փոխ-տեսչին հաղորդեցինք հեռուեալ իմաստներով. — Վարժապետանոցը ամենախիստ կարգապահութեան զրութեամբ կը կառավարուի. ուսուցիչները իրենց յատկացուած պարտականութիւնները կը կատարեն ճշգրտապահութեամբ, եւ ճշգրտապահութեամբ ալ իրենց թոշակը ստանալէ զատ ուրիշ ո՛ր եւ է իրաւունք չեն վայելեր: Տեսչութեան եւ ուսուցիչներու միջեւ անհամաձայնութեան մը հնարաւորութիւնը իսկ մեր մտքէն չի կրնար անցնիլ, հետեւաբար ո՛ր եւ է միջնորդութեան զազափարը աւելորդ է եւ անընդունելի: Եւ փոխ-տեսչութեան խիստ յանդիմանագրով մը յանդիմանեցինք իր տկարութիւնը որով թոյլատրած էր անպատեհ միջամտութիւնը: Ուսուցիչները պարտաւոր են բացարձակօրէն հպատակիլ փոխ-տեսչին որ Պ. Փորթուզալեանի ներկայացուցիչն է, ուստի և արտաքին ազդեցութեամբ եղած բոլոր կարգադրութիւնները ջնջուած են: Խնդիր յարուցանող ուսուցիչ մը անմիջապէս պէտք է հրաժարեցնէ. եթէ բոլոր ուսուցիչները միաբանին, ամենքն ալ կարող է հրաժարեցնել: Պիտիւն կը խրկուին ձեռնհաս ուսուցիչներ:

Մեր այս որոշումները երբ Վան հաղորդուեցան, միջնորդ անձնաւորութիւնը իր հրաժարականը խրկեց Արարատեանի անդամակցութեան: Ու ուսուցիչները լռեցին, և կանոնաւոր կարգապահութեամբ իրենց յանձնուած գասխտութիւնները շարունակելով ուրիշ գործի շխտոնուեցան այլ եւս:

Արարատեանի ցոյց տուած կորովը չյուսահատեցուց

այն խումբ մը Վանեցիները որոնք կ'ուզէին անպատճառ տեղական ազդեցութեան ենթարկել Վարժապետանոցը եւ յաջողիլ այս կամ այն կուսակցութեան նկատմամբ ծառայեցնել ընկերութեան վարկը եւ ազդեցութիւնը: Մեր ազգային բարքերուն համար այնքան բնական երեւոյթ մըն է քաղքի մը ազդեցիկ պատակարարին գերիշխանութիւնը հանրային ամէն գործի մէջ, որ մենք ո՛չ կ'ապշէինք, ո՛չ ալ կը բարկանայինք Վանեցիներէ ոմանց մեր գործերուն խառնուելու այս ամբասլինգ յամառութեանը: Իսկ անոնք ալ անկարող էին ըմբռնելու անկախութեան համար մեր այս հաստատամտութիւնը որ տարգրինակ եւ անբնական նորութիւն մը կ'երեւնար իրենց: Նոր ճակատամարտ մը կը պատրաստուէր: Պ. Փորթուզալեանի վերադարձէն առաջ յաղթանակ մը տանելու պէտքը կը զգային ազդեցիկ Վանեցիները: Պատրաստութիւնները կարճ ժամանակամիջոցի մէջ զաղտնաբար տեսնելով որ մըն ալ մէկէն ի մէկ կուրի նշանը տրուեցաւ եւ յանկարծ յարձակուում սկսաւ: Թշնամիները մեզի անձանօթ էին, բայց իրենց ռազմայարարութեան տաղանքը անտարակուսելի էր: Ազգային միաքը խոփելու ամբաստանութիւններ պատրաստած էին, եւ կը պայթեցնէին թէ՛ Պիտիւն եւ թէ Վան միեւնոյն ժամանակ:

Ամբան շաբաթ իրիկուն մը Պիտիւն թերթի մը մէջ կարգադրութիւն Վարժապետանոցի աշակերտներուն ծնողները ստանալէս կը բողոքեն ընդդէմ այդ հաստատութեան որ իրենց զաւակները անկրօնութեան կ'առաջնորդէ. ապացոյց՝ աշակերտներուն ձեռքը տեսնուել է Մեթոտի վրայ կոտորանգանի հրատարակած գիրքը:

Այս ամբաստանութեան կարեւորութիւնը հասկցնելու համար պէտք է յիշեցնել թէ քսան տարի առաջ այդ գիրքը երբ հրատարակուեցաւ, Թիւրքիոյ Հայերը տակն ու վրայ եղած, ամենքն ալ իրենց կրօնական զգացումներուն մէջ խոփուած, կրօնական Ժողովն ալ քիչ մնաց պիտի բանադրէր հեղինակն ու գիրքը: Ու նոյն պահուն որ Կ. Պոլսոյ լրագիրներուն մէջ այսպիսի հրատարակութիւններ տեղի կ'ունենային, անպիսի Վանի եկեղեցիներէն մէկուն մէջ Փիլոզալեանի Ղեւոնդ վարդապետ ամենաձանր լեզուով մը խոզովորդը կը գրդուէր Վարժապետանոցին դէմ որ ամպարչտութիւն և անհաւատութիւն դաս կը տրուէր: Ու Վանէն զանազան անձեր, ծանօթ թէ անձանօթ, Արարատեանի Գործադիր ժողովին նստակներ գրելով կը նկարագրէին Վանի խոփալոյզ վիճակը, կը գուշակէին Վարժապետանոցին մօտալուտ քանդումին վտանգը, եւ ամէն շարիքի իբր դարման փոխ-տեսչին անմիջական հրաժարեցումը ցոյց կուտային: Տագնապալից օր մը եղաւ ինծի համար այդ շաբաթ օրը: Բոլոր ընկերներս ասդին անպիսի էին ամբան պատճառաւ, ու ես ալ կղզի կը բնակէի. անկարելի էր իրար տեսնել երկու օրէն առաջ, եւ սակայն անմիջական տնօրինութիւն մը անհրաժեշտ էր: Կը զգայի թէ վարանում մը, ամենաթեթեւ տկարութիւն մը կրնար վտանգել ամբողջ ապագան: Արարատեան ընկերութիւնը Վանեցիներուն մէջէն խմբակի մը տրամադրութեան ներքեւ

պիտի մտնէր, կամ պիտի կործանէր առանց կորույի ընթացքի մը: Բոլոր պատասխանատուութիւնը վրաս առնելով անմիջապէս Վան Վարժապետանոցին փոխ-տեսչութեան հեռագրեցի զպրօցէն արտաքսել այն բոլոր աշակերտները որոնց ծնողքները ստորագրած են բողոքադրին ներքեւ: Միեւնոյն ատեն փորձալէմեան վարդապետին ալ հեռագրեցի թէ է. Պոլիս կրօնական ժողովին առջեւ իրեն դէմ դատ պիտի բանայ Արարատեան ընկերութիւնը, զինքը ամբաստանելով իբր զբարտիչ եւ զբողոք: Երկուշաբթի օր պաշտօնակիցներս ամենքն ալ հաւանեցան ըրած կարգադրութիւններու: Այսքանով սակայն չբաւականացայ, թղթակցութեամբ մը Մշակի մէջ շարաշար հարուածեցի փորձալէմեան վարդապետը:

Եւ ահա արդիւնքը շուտով քաղեցինք: Վանէն փոխտեսչութիւնը հեռագրով իմացուց թէ աշակերտներուն ծրուողը զղջում կը յայտնեն իրենց ըրածին համար, յայտարարելով որ զիրենք զրգոզներուն գործիք եղած են: Ա՛լ բնական էր որ սպասնալիքը չէր իրագործուեր: Քիչ ետքն ալ Պոլիս եկաւ փորձալէմեան Ղեւոնդ վարդապետը: Երբ Արարատեանի զրասնեակը իրարու հանդիպեցանք, խեղճ մարդը շատ մեղքեցայ: Թիֆլիսի ճամբով եկած էր. սահմանադիւն մինչեւ Սեւ ծով անցած, ամէն քաղաքնեւրուն մէջ նախատինք կրեւր էր հայ ժողովուրդէն, որ զինքը կ'ամբաստանէր իբր թշնամի Հայաստանի զարգացումին: Մշակի թղթակցութիւնները ծանր հարուածներ տրւած էին այդ խեղճ եկեղեցականին որ զողորհար կ'ըսէր. « Ի՞նչ փորձանք բերիք դիտու, ես ի՞նչ ըրի ձեզ, ամբողջ Ռուսաստան զիս խայտառակեր էք: »

Այդ նենգամիտ գաւազնութիւնն ալ շախմատեցաւ: Վարժապետանոցին մէջ անկրօնութեան շատագոյնութիւն երբեք չէր եղած, ուղղակի կամ անուղղակի: Մեր համագումներուն հակառակ էր Հայաստանի հայ ժողովրդին մէջ տարածել այնպիսի գաղափարներ որոնք ոչ միայն ազգը կրնային երկպառակել այլ եւ ամբողջ պատմական անցեալ մը քանդելու ծառայել: Միշտ ուշադիր կ'ըլլայինք սր է. Պոլսէն խրկած մեր գրքերը, հայերէն թէ ֆրանսերէն, ո՛չ Հայոց կրօնական աւանդութիւններուն, ո՛չ ալ ընտանեկան համեստութեան հակառակօք քարոզութիւններ, պատմութիւններ, շատագոյնութիւններ պարունակին: Բայց Պոլիս կամ այլուր տպուած ո՛ր եւ է գիրք կրնար Վան խրկուիլ ուրիշներու կողմ. ու հաւանական էր որ Միքոտի վրայ հեղինակութիւնն ալ ո՛ր եւ է մէկը Վասպուրական տարած ըլլար, եւ Վարժապետանոցի ցերեկօթիկ աշակերտներէն մէկուն ձեռքը անցած:

Վասպուրականի մէջ Վարժապետանոցին դէմ յարուցուած ամէն դուռարութեան յաղթած էինք. այն ընդհանուր համոզումը տիրեւր էր թէ անհնարին պիտի ըլլայ ո՛ր եւ է միջամտութիւն այդ հաստատութեան ներս սպրդեցնել. հանդարտ մնալու հարկը ամէն ոք զգաց:

Սակայն մենք ապագային համար կասկածոտ կը մնայինք, գուշակելով թէ ջանքեր պիտի չպակսէին կառավարական ուղարկութիւնը Վարժապետանոցին վրայ հրա-

ւիրելու: Ո՛ր եւ է պատահականութեան առջեւ յանկարծակիի՝ չգալու համար զիմեցինք Ներսէս պատրիարքի աջակցութեանը: Վանի կուսակալը այն ատեն համբաւուր Հանան փաշան էր: Այդ թիւրք պաշտօնեան Ներսէսին բարեխօսութեամբը յառաջացած էր ապարէզին մէջ. խարբերդէն Վան փոխադրուած էր փաշայութեան տիտղոսով, շնորհիւ Ներսէս պատրիարքին. պատրիարքին եւ կուսակալին յարաբերութիւնները բարեկամօրէն կը շարունակուէին: Պաշտօնակցի մը հետ զիշեր մը Բերա պատրիարքին տունը գացինք, իր աջակցութիւնը խնդրելու համար: Ներսէս չէր մոռցած Ասիայի խմբագրին իրեն դէմ մղած պայքարները, որոնց պատճառաւ Ասիան ջնջել տուած էր, եւ կը մնար Պ. Փորթուզալեանի դէմ միշտ զրդուած. սակայն լայն մաքով կը խորհէր, ուստի եւ յայտարարեց թէ ինչ որ ալ ըլլային իր զգացումները Փորթուզալեանի նկատմամբ, ինք միշտ կրթական գործին բարեկամ էր, հետեւաբար եւ մեր ուզած յանձնարարութիւնները պիտի տար: Եւ իրաւ ալ միւս օրը պատրիարքարանէն ստացանք Երկու նամակ, մէկը Վանի առաջնորդարանին, միւրը՝ Վանի կուսակալին գրուած: Առաջինումը Ներսէս պատրիարք կը պատուիրէր առաջնորդարանին ո՛ր եւ է դժուարութիւն չյարուցանել Արարատեան ընկերութեան, անոր վարժարաններուն եւ պաշտօնեաններուն դէմ, ու պաշտօնական մարմիններուն բոլոր աջակցութիւնը նուիրել ընկերութեան երբ հարկ տեսնուի: Միւսումը՝ Ներսէս պատրիարք Հասան փաշային կը ծանուցանէր Վարժապետանոցին համար իր ունեցած հոգածութիւնը, եւ կուսակալին պաշտպանութիւնը կը խնդրէր այդ հաստատութեան վրայ: Այս երկու նամակները Վան խրկուելով սքանչելի ազդեցութիւն գործեցին պաշտօնական մարմիններուն վրայ:

Ա՛լ հիմա Արարատեանի բոլոր հաստատութիւնները ապահով վիճակի մէջ էին. ո՛չ Առաջնորդարանի, ո՛չ տեղացիներու, ո՛չ կառավարութեան միջամտութիւնը կը վախցուէր: Պ. Փորթուզալեան ալ Եւզոկիայէն վերադարձած ըլլալով վերստանձնած էր իր պաշտօնը եւ իր հեղինակութեամբ կը վարէր գործերը ինչպէս որ պէտք էր:

Այդ ժամանակները Վասպուրականի սուսական հիւպատոս նշանակուած էր կամսարական պէյ, որ իր կնոջը հետ մէկտեղ Վան հաստատուելով ընդհանուր ոգեւորութիւն մը ստեղծեց Հայոց մէջ: Տիկին կամսարական պէյ մասնաւոր հոգածութիւն ցոյց կուտար Վարժապետանոցին, եւ շատ անգամ անձամբ կը քննէր աշակերտները: Կովկասի հետ Արարատեան ընկերութեան յարաբերութեանցը համար կամսարական պէյի եւ իր տիկնոջ վկայութիւնները մեծ կարեւորութիւն ունէին. ու արդարեւ իրենց բոլոր ազդեցութեամբը նպաստեցին յատկապէս Վարժապետանոցը սիրելի եւ համակրելի ընծայելու:

Կ. Պոլսէն աչքս միշտ Վարժապետանոցին վրայ յառած ըստ այնմ կը գրէի Մշակին, եւ անձնական նամակներով ալ տեղեկութիւններ կը հաղորդէի Արժուրդիին: Ռուսիոյ Հայերը ո՛չ միայն չէին թուշար իրենց եռանդին

մէջ, այլ ընդհակառակը օրէ օր յաւելի համոզեալ մտքով կը հատարէին անոր ապագային եւ ըստ այնմ ալ կ'աջակցէին: Թիֆլիզէն, Երեւանէն յատկապէս այցելուներ վան կ'երթային ու Արարատեանի վարժարանները անձամբ տեսնելով եւ քննելով իրենց տպաւորութիւնները կը հրատարակէին, եւ մենք ալ կ'օգտուէինք քննադատութիւններէն, յայտնուած կարծիքներէն. բայց ամենուն ալ ընդհանուր տպաւորութիւնը անհուն գահունակութեան զգացում էր:

Այդ յարաբերութեանց առթիւ էր որ Կովկասի մէջ գաղափար յղացուեցաւ վարժապետանոցին նուիրել երկու կովկասցի մանկավարժ, որոնք յատկապէս Գերմանիա ասպարէզին համար պատրաստուած էին: Այս խորհուրդը Պոլիս մեզի հաղորդուեցաւ, միանգամայն մեր կարծիքները կ'ուզէին մանկավարժներուն հետ կնքուելիք պայմանագրութիւններուն մանրամասնութեան մասին. իւրաքանչիւրին ամսական 20—25 ոսկի պիտի տրուէր Կովկասի երիտասարդներու կողմէն: Այդ խորհուրդը մեզի օգտակար չերեցաւ երկու պատճառներով: Վարժապետանոցին մէջ յատկապէս Ռուսաստանէն բերուած երկու ուսուցիչներու ներկայութիւնը կրնար քաղաքական դիտաւորութեանց վերագրուիլ, կառավարական կասկածներ հրատարակել, թշնամիներու ձեռքը զէնք դառնալ, եւ վարժապետանոցին փակուիլը այդ ամէնուն հետեւանքը կրնար ըլլալ: Այս քաղաքական նկատումներէն յետոյ կուգար մանկավարժական նկատումը: Թէեւ քիչ ատենէ ի վեր էր որ սկսած էինք յարաբերութիւն հաստատել Կովկասի Հայոց հետ, բայց ուշադրութեամբ կ'ուսումնասիրէինք անոնց մտաւորական կեանքի վիճակը: Կը դիտէինք թէ ընդհանուր կերպով միշտ մթին եւ խրթին կերպով կ'արտայայտեն իրենց բոլոր գաղափարները, երբ ո' եւ ի մաստասիրական հանգամանք ունին ատոնք: Գուցէ անոր համար որ գիտութիւնները լաւ չեն մարտած, ուստի եւ իրենց միտքը յստակ կերպով բացատրելու դժուարութիւն կը կրեն: Մանկավարժական կարգ մը հրատարակութիւններ, մասնաւորապէս հեղինակութիւններ անոնց օրոնք վարժապետանոցին համար ուսուցչական ընտրելի կը ներկայացուէին, ուշադիր կարդալով կը տեսնէինք թէ կրթական հրատարակութեան մը կն մեծ արժանիքը կը պակսէր անոնց՝ պայծառութիւն եւ պարզութիւն: Ու միանգամայն մեր բոլոր տեղեկութիւններէն ալ իմացանք որ մանկավարժական դասախօսութիւնները ծանր ու ձանձուրանալի ոճով կ'աւանդուին այդ հեղինակներուն կողմէն: Բոլոր այս անպատեհութիւնները նկատողութեան առնելով ընդարձակօրէն գրեցի Արժրունիին, ամէն բան մանրամասնօրէն բացատրելով: Կատարելապէս համամիտ գտնուեցաւ մեր տեսութեանցը, եւ ատ խորհուրդին գործադրութիւնը ետ մնաց ատանց ո' եւ է վստահ բերելու Արարատեան ընկերութեան Կովկաս վայելած համարումին եւ համակրանքին:

Թէ՛ վարժապետանոցը եւ թէ՛ գիւղական վարժարանները կատարելապէս ապահովուած, նիւթական ու բարո-

յական աջակցութեամբ զօրացած այլ եւս անարդել կը յառաջանային յառաջդիմութեան ճամբուն մէջ, գեղեցիկ ապագայի մը խոստումներովը լեփ լեցուն: Ես ալ պահ մը թողում վասպուրականը, եւ անցնիմ ուրիշ գաւառի մը, ուրիշ գործերու:



Երեք մեծ նահանգներ՝ Վասպուրական, Տարօն, Կիլիկիա և Պոլսոյ երիտասարդութեան ամբողջ հոգածութիւնը իրենք գրաւած էին, բայց կար ուրիշ մըն ալ որ թէեւ սրտերը տրոփեցնող անուն մը չէր կրեր, այլ խիտ հայ բնակչութեան մը կեդրոնն էր, եւ յատուկ ինձամակարութեան արժանի, Տէրսիմը: Ներսէս պատրիարք փափաքեցաւ որ Արարատեան ընկերութիւնը այդ կողմն ալ կրթութիւն տարածէ: Ընդհանուր ժողովը պատրիարքին առաջարկութիւնը նկատողութեան առաւ, ու սկզբունքով զայն ընդունելէ յետոյ գործադրութեան դիւրացումին պայմանները եւ ապահովութիւնները Գործադիր ժողովէն խընդրեց: Ընկերութեան զրամական կացութիւնը թէեւ բարելաւ էր հիմա, բայց ելմտացոյցն ալ շատ բեռնաւորուած. ոչ ոք կ'ուզէր նոր ծախքի մը դուռ բանալ ատանց նախապէս ապահովելու համապատասխանող հատոյթ մը: Գործադիր ժողովին յանձնուեցաւ գործին ամբողջութեանը համար մանրամասն ծրագիր մը պատրաստել:

Այն ատենները Պոլիս կը գտնուէր հանդուցեալ Սրուանձտեանց Գարեգին վարդապետը սրուն հետ լաւ բարեկամներ էինք: Տէրսիմ, Փոքր-Հայք, ամէն տեղ ճամբորդած ու պաշտօնավարած էր, եւ մտացի մարդ մըն ալ ըլլալով լաւ ուսումնասիրած էր այցելած կամ բնակած երկիրները, եւ անոնց զանազան տեսակ յարմարութեանց կամ պէտքերուն տեղեակ: Գիշեր մը ատենս հրաւիրեցի զինքը, Գործադիր ժողովի ընկերներս ալ եկան, ու սկսանք խորհրդակցիլ: Վարդապետը ամէն տեսակ տեղեկութիւն տուաւ, եւ յանձնարարեց որ նախապէս աշխարհագրական շրջանակ մը գծենք զաստիարակութիւն տարածելու սահմաններուն համար եւ անանկ ճամբայ ելլենք: Այդ օրէն յետոյ Սրուանձտեանցի հետ բազմաթիւ տեսակցութիւններ ունեցանք եւ յաճախակի խորհրդակցութիւններ կատարեցինք, ու իրեն ցոյց տուած ուղղութեամբը յատակադի մը պատրաստեցինք. թէ՛ բանի մը քաղաքներ՝ ինչպէս Չարսանձաղ, Չմշկաձաղ, թէ՛ բանի մը մեծ գիւղեր, ինչպէս Խուսիս, Հաւաւ, Բերրի, պէտք էր միեւնոյն ժամանակ պարոցներ հիմնել:

Շատ լրջութեամբ եւ մեծ ինձամբով պատրաստուած այս ծրագիրը նախ եւ առաջ հաղորդեցի Արժրունիին, բացատրական ընդհանուր տեղեկութիւններով: Մինչեւ հիմա Կովկասի Հայերը կը նպատակէին Վասպուրականի կրթութեանը. այդ նահանգը ուսական Հայաստանի սահմանակից էր, քաղաքական կարեւորութիւնը մեծ էր, ու հայութեան հոծ բնակավայր մը, ապագայի համար մեծ յոյսերու կեդրոն մը: Տէրսիմ այս բոլոր առաւելու-

Թիններէն զուրկ էր, ու չէինք կրնար զուշակել թէ մեր ծրագիրը ինչ տեսակ ընդունելութիւն կրնար գտնել Կովկաս: Արարատեան ընկերութեան մեծ ուժը Մշակն էր, ու երբ Գրիգոր Արծրունին մեզի համարիտ զանուշիով իր աշակցութիւնը խոստանար Տէրսիմի համար ալ, ան ատեն առանց ո՛ր եւ է վարանուծի կրնայինք ձեռնարկել զպրոցներու հիմնարկութեանը: Պատասխանը կը գերազանցէր յայտարար: Մշակի խմբագիրը քսանամենի թարմ եւ բիտասարդի մը սգեւորութեամբ կը դրէր, զրուստելով Տէրսիմեան ծրագիրը, ու խոստանալով ամէն աշակցութիւն:

Երբ կովկասէն այս ապահովութիւնը կը ստանայինք միեւնոյն ատեն Ներսէս պատրիարքէն ալ գործնական աշակցութիւն կը գտնէինք: Պատրիարքը բոլոր եկեղեցիներուն կոնդակ մը խրկեց, հայ ազգին վստահութեանը եւ հզօր աշակցութեանը յանձնարարելով կրթական եւ բնական ընկերութիւնները, ու փակագիծ մըն ալ բանալով մասնաւորապէս Արարատեան ընկերութեան համար բացարձակ հրահր մը կը կարգար: Տէրսիմի համար Ներսէսի առաջարկին մեր կողմէն գտած ընդունելութեան փոխարինութիւնն էր այս բացառութիւնը: Ենթահիւ Ներսէս պատրիարքին վայելած անհուն ժողովրդականութեանը, այս կոնդակը շատ մեծ ազդեցութիւն ունեցաւ: Հայ եկեղեցականութեան համար փառաւոր տիտղոս մը եղաւ պատրիարքին այս կրթասիրական գործը: Ներսէս անգամ մը եւս հաստատեց թէ հայ եկեղեցականը ու հայ աշխարհականը զատ զատ մարմիններ չեն կազմեր, ու մէկ հայրենիքի համար կ'աշխատին առանց ո՛ր եւ գասակարգի նկատողութեան:

Գործադիր մարմինը այս երկու ուժերովը զօրացած, կրցաւ ընդհանուր ժողովին մէջ պաշտպանել Տէրսիմի համար սլատարաստուած ծրագիրը եւ զայն ամբողջութեամբը քուէարկել տալ:

Հիմա կը մնար ծրագիրը գործադրել. դժուարին հարցը հոն էր. պէտք էր գտնել վստահելի անձնաւորութիւն մը որ յանձնառու ըլլար Տէրսիմի այցելել, քննել երկիրը եւ գործի ձեռնարկել. ինծի պարօրացակից երիտասարդ մը որ ջերմ բարեկամս էր, յանձնառու եղաւ այդ պաշտօնին, առանց ո՛ր եւ է վարձատրութեան: Ներսէս պատրիարքին կողմէն թէ՛ ազգային եւ թէ՛ օսմանեան իշխանութեանց ուղղուած յանձնարարութիւններով 1879ին Պոլսէն Տէրսիմի տնօրէնը մեկնեցաւ. յաջորդ տարին ալ այս ուղեւորութիւնը կրկինց: Այս պատմութեան մէջ ժամանակազրական կարգ չեմ պահեր այլ պարզապէս ընդհանուր պատկեր մըն է որ կը ներկայացնեմ, ուստի երկու ուղեւորութեանց արդիւնքը մէկ կը խառնեմ:

Այդ երկու տարուան մէջ պոլսեցի երիտասարդը հաստատեց թէ Հայաստանի ժողովուրդը ինչ առաջնորդ որ ունենայ անոր կը հետեւի խանդավառութեամբ: Գործելու, աշխատելու, շինելու միշտ եռանդոտ է Հայաստանցին: Կ. Պոլսէն այցելու տնօրէնը երբ սաքը Տէրսիմի կոխեց ժողովուրդը անմիջապէս սգեւորուեցաւ: Ը երկու տար-

ուան մէջ հինգ զպրօց կառուցուեցան 1000 սկիւի արժողութեամբ, առանց ընկերութեան սնուցիկին վրայ ծանրութիւն բեռնելու: Ամէն տեղ քաղաքացի եւ զիւղացի փայտ կրեցին, քար կրեցին, ձրի աշխատեցան, զրաժտուին եւ պարօրացները շինուեցան: Երիտասարդը ամէն առտու ինք կանուխ գործին պոլսը կ'անցնէր, փայտ ու քար կրելու օրինակը ինք կուտար, և ժողովուրդը ետեւէն կ'երթար: Ու շուտով տեսչութիւն մը հաստատուեցաւ, ուսուցիչներ խրկուեցան, եւ դաստիարակութեան գործը հոն ալ հիմնուեցաւ:

Մէկ երկու պատմութիւն շատ բնորոշ են եւ կ'արժեն որ յիշատակեմ:

Տէրսիմի քաղաքներէն մէկուն մէջ կառուցուած զբոսայրոցին համար Պոլսէն ապակի խրկուեցաւ, բայց անցընող չկար: Բսան տարի առաջ ինչպէս հիմա, դեռ նախապատմական կեանքը կը շարունակուէր Հայաստանի զանազան կողմերը. իւրի մէջ թաթխուած հասարակութիւնը ապակի տեղ կը ծառայէին: Երիտասարդ տնօրէնը շուտով եր: Օր մը Գոյմաշումին երբ կ'այցելէ, թիւրք պաշտօնեան զպրօցին շինութեանը մասին տեղեկութիւններ կը հարցնէ: Միւսը կէս մը ժպտելով կը յայտնէ թէ փորձանքի մը մէջ կը գտնուի, եւ կը պատմէ ապակիները անցընելու անկարելիութիւնը: Գոյմաշումը կը սկսի ինզու, «Գուն վաղը զպրօց եկուր, ես ալ կուգամ և բան մը կ'ընենք» կ'ըսէ: Տնօրէնը չիտէ թէ ինչ պիտի ըլլայ եւ յաջորդ օրը որոշեալ ժամուն կ'երթայ: Եւ ահա զայմազամն է, թեւերը սօթթած «ապակիները ո՛ւր են» կը հարցնէ: Կը բերուին, եւ մարդը ազամանդ մը հանելով զբաւանէ, կը սկսի անցընել: Պոլսեցի երիտասարդին անպատեմութիւնը եւ բեւակայելու է: Յետոյ զայմազամը կը խոստովանի թէ ինք ժամանակաւ Պոլիս ձաւձի է եղեր, արհեստը գիտէ, է՛հ, բազմին բերմամբ ալ հիմա զայմազամ է, ինչ կ'ըլլայ, եւ այսպէս հայրենակիցներուն ծառայութիւն մը կը մատուցանէ: Չմոռնամ յիշելու թէ տնօրէնը Պոլսէն դացած ատենը ազէկ տեսակէն ծխախոտ զայմազամին նուր տարած էր, պատրիարքական յանձնարարականին հետ մէկտեղ:

Չմոռնամ զվարձարան մը կը կառուցուէր. նահանգին կուսակալը նոյն միջոցներուն պտոյտի ելած ըլլալով կը հանդիպի եւ այդ քաղաքը, ու մեր շէնքին առջեւէն անցած ատեն անոր ինչ ըլլալը կը հարցնէ. պատասխան կը ստանայ թէ Հայոց զպրօցն է: Կ'ուզէ գիտնալ թէ իրենցը ո՛ւր է: Կուսակալը կը տանին տեղ մը ուր քանի մը ոտք պատ վեր ելած էր. կը կանչէ պաշտօնեաները եւ կը թքնէ եւ բեռնին ըսելով. «Երկու տարի առաջ երբ ասկէ անցայ այս պատերը այնքան բարձր էին, ու երկու տարի ետքը նոյն վիճակին մէջն են: Հայերը բան մը չուէին այն ատեն եւ հիմա տեսէք մէկ երկու շաբթուան մէջ ինչ են ըրած. խանեցէք անոնցմէ:» Իսկ Հայերը կանչելով կը գովէ իրենց ուսումնասիրութիւնը:

Երբ Արարատեան ընկերութիւնը Տէրսիմի զպրօց կը բանար, նոյն միջոցին ամբերկացի միախոնար մը 15,000

ուկիի հարստութեամբ մը խարբերդ կ'երթար, կրթական նպատակաւ: Ու մերինները մեզի Պոլիս կը գրէին. «Անոնք այսպիսի ահագին հարստութեամբ կ'երթան, ինչ պիտի ընենք մենք որ հազիւ 3-400 ոսկի պիտի կրնանք յատկացնել:» Ամիսներ ետքը նամակ առինք որ Ամերիկացի միսիոնարները պիտի պարտաւորուէին իրենց զգարոցները փակել այն զեղերը ուր մենք վարժարան բացած էինք: Սկզբնաւորութիւն մը եղած էր Հաւաւէն, կարծեմ: Ամերիկացի միսիոնարներուն պետը, մըսթըր Պարնըմ, եթէ չեմ սխալիր, ինք ամէն կողմ կը յայտարարէր. «Ինչ պէտք ունինք մենք զպրոց բանալ հոն, ուր արդէն Հայերը իրենք կը բանան, մանաւանդ որ հայ զեղացիները իրենց զաւակները լուսաւորչական զպրոց կը խրկեն:»

Հայրենիքէն դուրս գտնուող Հայերը սովոր են միշտ ուրիշները մեղադրել թէ կուզան Հայոց հոգիները որսալու, Հայոց կրօնքը բանդելու, եայն: Երբ փոխանակ դատարկ արասնջներու քիչ մը գործնական եղանակաւ գործելու կ'ենենք, յաջողութիւնը միշտ մեր կողմն է: Հայաստանի հայը ուսումի, գիտութեան, քարոզի ծարաւի է, ուսկից որ կուզայ զայն կը լափէ: Պապական մարդը ջուրը կը խմէ, առանց երկայն բարակ հարցընելու թէ բղրումը ո՞ւսկից է:

Տէրսիմ քիչ ժամանակի մէջ յառաջդիմեց. ժողովուրդը ընդհանրապէս շատ մաացի, աշխատասէր եւ կարիճ է հոն: Մշակի մէջ բաւական տեղեկութիւններ կը հազորդէի կովկասի Հայոց ու առանձին նամակներով ալ կը գրէի:

Արարատեան ընկերութիւնը իր ելեւուտքը լաւ կանոնաւորած, իրներքին կազմակերպութիւնը ամբաստանած, այլ ետ ուրիշ մտածութիւն չունէր, բայց եթէ Վասպուրականն ու Տէրսիմը մտաւորական ու բարոյական զարգացումով վերակենդանացնել, մինչ ուրիշ երկու ընկերութիւն ալ այդ ծրագրով եռանդալից կ'աշխատէին Տարօնի եւ կիլիկիոյ համար, ու կ'ինքն ալ երկու ընկերութեամբ մեծապէս կը նպաստէին այդ մեծ գործին:

**ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ**

Ք Ղ Ի

**ԱՀՈՒԵԼԻ ԽԺԴԺՈՒԹԻՒՆ ՄԸ**

Քղիի Դարման զիւղին մէջ Քիւրտերուն կատարած մէկ նոր ու ահաւոր եղեանագործութեան մանրամասնութիւնները կը հասնին մեզ:

Համիաիէ հեծելազորքէն 30 Քիւրտերու խումբ մը, իրենց հետ ունենալով 12 շորի, գիշեր ատեն կը կոխեն

Դարման զիւղը եւ կը պաշարեն Սարգիսեան Մարտիրոս աղայի տունը: Մարտիրոս աղա մեծ հարստութեան տէր ճանչցուած էր. բայց, իր նմաններէն շատին հակառակ, ամբողջ զաւառակին աղքատներուն համակրանքը կըրցած էր վաստիկ իր բարեօրոտութեամբը եւ ազնուութեամբը:

Քիւրտերը իր անկողնին մէջ կապելով Մարտիրոս աղան, մահուան սպանալիքով կը պահանջեն որ ցոյց տայ իր գանձին տեղը: Մարտիրոս աղան կը համակրպի: Աւագակները գտնուած բոլոր պատրաստ դրամը առնելէ յետոյ, կը պահանջեն իրենց զոհէն որ միանգամայն ցոյց տայ բոլոր արժէքաւոր իրեղէններու տեղը: Մարտիրոս աղան, դաշոյններու սպանալիքին տակ, այս պահանջումին ալ զոհացում կուտայ: Քիւրտերը յետոյ տանը արտոնէն երկու շորի առնելով միացնելով իրենց հետ բերած 12 շորիներուն, զորոնք անպատճառ ուրիշ Հայերէ յափշտակած էին, անոնց վրայ կը բեռցնեն ամէն իրեղէն որ քիչ շատ արժէք մը ունի:

Տնեցիները, սարսափահար, լռիկ հանդիսատես կը մնան այս տեսարանին: Իրենց տարիներու աշխատութեան պտուղն է որ ահա իրենց ձեռքէն կը խլուի վայրագօրէն. բայց գոնէ կեանքերին իրենց կը թողուի, եւ սրտատրոփ կը սպասեն այս կոզոպուտին վերջանալուն:

Բայց աւագակները իրենց սփիւրջ կիսատ թողուլ չեն ուզեր: Երբ շորիներուն վրայ բեռները կազմ ու պատրաստ են, կը բռնեն Մարտիրոս աղան, ու իր ընտանիքին առջեւ կը խողովողեն զանի՝ դաշոյնի 36 հարուածով: Իրենց կատաղութիւնը ասով յագուրդ չգտնելով, արիւնլուայ մարմինը տանիքէն վար կը նետեն, ու հոն բակին դրան վրայ կը շարունակեն իրենց արիւնուշտ գործը, դուխը եւ մարմինը իրարմէ բաժնելով: Յետոյ, առանց անպարծելու, հանդարտօրէն, կը հեծնեն իրենց ձիերը, եւ շորիները իրենց հետ բռնելով կը մեկնին, մութին մէջ անհետանալով:

Մարտիրոս աղային ընտանիքին անպաճեղէն շատը իրենց սարսափէն հիւանդացած են եւ անկողին կը գտնուին կիսամեռ:

Այս ահուելի եղեանագործութեան լուրը Պոլիս հասած է միանգամայն եւ Օրմանեան պատրիարքին ալ հազորդուած: Ասիկա սակայն արգելք մը չէ եղած որ Օրմանեան Պոլսոյ եկեղեցիներուն բեմէն անպատկառօրէն չաւեւեւեւ հայ ժողովրդին թէ «Սուլթանը իր հայրախնամ հոգածութեամբ խոստացած է մօտերս բարեքներ շնորհել իր հաւատարիմ հայ ազգին» եւ սրտեանդն բարեմաղթութիւններ չընէ Մեծ-Մարգասպանին արեւշատութեանը:

# ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

## Պ Ա Ր Ս Կ Ա Ն Ք Ա Յ Ո Յ Ա Պ Ա Գ Ա Ն

### Ը

Այս յօդուածներուն շարքով մեր նպատակն էր Պարսկահայերը ծանօթացնել արտասահմանի Հայութեան: Ճանչնալ եւ ճանչցնել միակ ուղին է մեր տարագիր ու ցրուած ցեղը իրարու կապակցելու, իրարու մօտեցնելու, որպէս զի կարելի ըլլայ զիտնալ իրարու պահանջները եւ մէկին առաւելութեամբ միւսին պակասը լրացնել: Ինչքան տուժած ենք մենք մեզ ծանօթ չըլլալու դժբաղդութեամբ. յիշողութեան պզտիկ ճիգ մը այդ կարգի սոյժերու ամբողջ ցաւոտ շարք մը պիտի պատկերացնէ: Պիտի տեսնենք որ մեր վիրաւոր բազկին սպեղանի գնելու տեղ, մեր առողջ ոտքը վիրկապներով կաշկանդեր ենք. վերքը աճեր ու զայրացեր է, իսկ մեր ոտքը կասկած մնացեր է: Հարցուցէք Հայաստանցի Հայուն. ան այդպիսի դարտեր շատնի, կը պատմէ ձեզի:

Ներկայ յօդուածին վերնագիրը կարգալով չկարծուի թէ զուշակութիւններ ընելու ելքը ենք եւ երազներու շուրջը պիտի դառնանք: Պարսկահայուն ապագան անոր ներկայէն կախուած է, իսկ ներկան, ինչպէս աշխատեցանք ծանօթացնել, ցաւերով լեցուն է դժբաղդաբար, եւ յոյս ալ չ'երեւնար թէ այդ սեպած հորիզոնը պիտի պարզուի: Քանի մը շարքով առաջ բարեկամ մը կը գրէր Սալմաստէն. «Նորերումս 10-15 հոգի եկել են աւելցնելու... թիւր: Մի քանի օր առաջ նոցանից 2-3 հոգիին յաջողում է ստանալ փայտուկցի Պրն. Ն... ից եւ ուրիշ մի քանիսից 100ական թուման փող, արձակելով նրանց աների վրայ 25-30 հրացան...» Կ'անցնին շարքովները եւ վերջին պահուն ուրիշ նամակով մը կը գրեն. «Պարսկաստանի գրութիւնը մանաւանդ վերջերս շատ աղիտալի է. կեղեքումները, աւերումները Պարսկահայի տունը քանդում են. զաղթել եւ սկսել... թող փառաւորութիւն ուրեմն բազղախնդիրները, իրենց ջանքով Պարսկա-Հայաստանն էլ Տաճկա-Հայաստանին գրութեան հասաւ...»

### Ինչո՞ւ:

Փաստը արձանագրուած է: 10-15 բաղդախնդիրներ երեւան կ'ելլեն, խեղճ Պարսկահայ գիւղացիին ճտին նըստած կ'ուտեն, կը արորեն, կը բռնաբարեն, բառին բովանդակ նշանակութեամբը: Ինչ կ'ըլլայ հետեւանքը: Սա թէ պարսիկ քաղցած, անկուտ ու անոտճիկ խան-աղաները առիթ կ'ունենան ատով կեղեքումներու, արշաւանքներու ելլելու. առիթը տրուած է անգամ մը, «Գիւղիւն մէջ դաշախ կայ» բանաձեւ մըն է զարձեր արդէն, իսկ գիւղացին ստորագրութիւն տուած է որ դաշախ չպահէ. ու իրարու կը յաջորդեն խուզարկութիւնները, կեղեքումները, թա-

լանները, բանտ, ծեծ, հալածանք: Այնպէս որ հայասեր հոշակուած, վանի կոտորածէն բազմաթիւ հայ կեանքեր փրկող եւ Պարսկաստանի մէջ պարսկերէն ու հայերէն լրագիրներ հրատարակելու ձեռնարկ ընող Միրզա-Հիւսէին խանի ախորժակն ալ կը զրգուի, — անոր որուն սարփարաստութեան պաշտօնը ընդունիլը ուրախութեամբ ընդունուեցաւ բոլոր Պարսկահայերու կողմէն: Խեղճ մարդ, խորովածի հոտ առած էր, էշի տաղսցի ճենճերահատին հազիւ հասաւ, 60 թուման միայն կրցաւ ճանկել, իր զրուխն ալ ճանկեցին, պաշտօնն ալ ձեռքէն խլեցին, թումաններն ալ տոկոսով հանդերձ: Եա՛հ-Չաւախն օրերը անցած էին, որ կրցաւ հազարներ կորզել ու թաւրիկ տանելով հաւասար բաժին ընել: Բայց պաշտօնանկութիւններով կեղեքումները վերջ չեն գտներ:

Խեղճ Պարսկահայը իր դրան առաջ գտնուող Տաճկահայ թշուառ գաղթականին վիճակը տեսնելով հանդերձ գաղթել կ'ուզէ ու կը գաղթէ դէպի Կովկաս: Թերեւս Եա՛հը այս նոր հոսանքը կասեցնելու համար պարձեալ խոստմնալից ու սերալիւր հեռագիրներ գրիկ թաւրիկ, բայց նոյն տառն է որ կը կրկնուի:

Անձնուէր ու զարգացեալ երիտասարդական ոյժ մը կրնայ բարեբար ազդեցութիւն գործել հան, կրնայ լրացնել այն պակասը որ բաց մնացած է հանգուցեալ Մ. Աւետիսեանի նահատակութեամբ: Այս էջերուն մէջ ներկայացնելով Պարսկահայերուն կրթական վիճակը, ակնյայտնի եղաւ թէ ինչքան պէտք կայ հայ ուսուցիչներու, մանաւանդ զաւանդներու մէջ. քանի՞ գիւղերու ուսումնարանները փակ են այժմ սոսկ ուսուցիչ չգտնուելու պատճառով: Արտասահմանի մէջ իտէալներու շուրջ վարձող երիտասարդները թող լաւ հասկցած ըլլան որ գործնական իտէալ հոն պիտի գտնեն: Ազնիւ ու կարող ուսուցիչը զերունի Պարսկաստանի մէջ, եւ այդ գերին զիտակից ուժերը կը պակսին այնտեղ:

Ասիկցի առաջ խօսեցանք կեղրոնական վարժապետանոցի մը հարցի մասին եւ ցոյց տուինք անդական դարձիչ ուժերու պակասութեան պատճառաւ յառաջ եկած փնտրումները: Ե՛րբ հարց մը չէր ասիկա եւ երկար ժամանակ է որ կը յուզուի հայ մամուլին մէջ, նախնական ձեռնարկներն ալ քանիցս եղած են արդէն: Վերջին օրերս խնդիրը աւելի լուրջ կերպարանք ստացաւ, եւ ինչպէս ամենուն յոյսը թաւրիկի Կանանց Բարեգործական ընկերութեան վրայ էր, ան եղաւ այդ յոյսը իրականացնելու, ու նշանակելի գումար մը ինք գրամագրուի գնելով, հրաւեր կարգաց հայ հասարակութեան որ աջակցի իրեն գործը գլուխ հանելու համար: Գժբաղդաբար, այդ ամենակարեւոր հարցը այսօր զարձեալ անորոշութեան կը մասնուի լսի թաւրիկի առաջնորդին բռնած անսրակիւի ընթացքին զս՛հ երթալով: Եւ զեռ կան մարդիկ որոնք կ'ելլեն մեղադրելու Կանանց Բարեգործական ընկերութիւնը, որ տարիներ է վեր իր փառաւոր գործունէութեամբը կը վայելէ ամբողջ Հայութեան յարգանքը: Մենք կը յուսանք որ Այվազեան սըրբազանը փոխանակ ասոր անոր լսելու, իրեն յանձնուա՛յ

հօտին օգուտը միայն աչքի առաջ ունենալով եւ իր սեփական դատողութենէն առաջնորդուելով չպիտի կաշկանդէ հայ կանանց գործելու ազատութիւնը, եւ պիտի թողու որ Պարսկահայուն այս կենսական պահանջը լրացուի:

Այժմ կանանց Բարեգործական ընկերութեան դէմ ուրիշ գանդատ մըն ալ կը յարուցանեն: Կ'ըսեն թէ անոնք անընդհատ կ'օգնեն գաղթականներուն, եւ ձրիակերութեան կը վարժեցնեն զանոնք: Եթէ ճիշդ է որ նպատակը տրուի գործելու կարող, բայց գործէ փախչող գաղթականներուն, ամենքս ալ կը համաձայնինք թէ սխալ ընթացք մըն է ատ: Բայց ո՞վ է այդ ծոյլ ու ձրիակեր գաղթականը: Այն հայ գիւղացին չէ՞ որ արին ըրտինքով Հայաստանի արնոտ ահօսները կը հերկէր. կառավարութիւնը կը կեղեքէր զանի, քիւրսը կը խլէր անոր հասոյթին մէկ մասը, աղա-վաշխառուն կը պլօկէր զանի, բայց այդ հարստահարուած գիւղացին օր մը չէր գար ու չէր ըսեր՝ «Կտոր մը հաց տուր», ընդհակառակն քեզ կը հերքասիրէր իր յարկին տակ, իր ամենատաքնապալի օրերուն պանդըխտութեան կը դիմէր, համալուծեան մէջ կը մաշէր բայց բնաւ չէր մօտարար: Միթէ այսպէս շո՛ւտ փճացաւ հայ գիւղացին, կորսնցո՞ւց իր պատուասիրութիւնը, անզգայ մուրացի՞կ մը դարձաւ ան: Իրականութիւնը ինչքան տարբեր է: Միթէ չկային ու չկան այսօր ալ այնպիսի գաղթականներ որոնք Սալմաստի եւ Ուրմիոյ մէջ կը վարեն, կը ցանեն, կը քաղեն, եւ փոխարէն մի սյն իրենց օրապահին է որ կը ճարեն: Տրուեցա՛ւ իրենց հող, եզ ու գութան, որ անոնք մերժեցին ու մուրացկանութիւնը նախընտրեցին: Իսկ Պարսկաստանի ամէն անկիւնն ալ հող չի պակսիր:

Գործ, գործ պէտք է ստեղծել հոն: Գուցէ ան գաղթականները ստիպուած ըլլան ընդմիշտ հոն մնալու, մանաւանդ որ այժմ հայրենիքին գոնեքը ամուր փակուած են իրենց առաջ, իսկ իրենց կալուածները մեծ մասամբ Քիւրտերը գրաւած են: Գաղթականներուն Սալմաստ հաստատուելը կարտաբեր չէ՛ ուրիշ հեռաւոր գաղթականութեանց նման. մօտ է հայրենիքին, նոյն օգն է որ պիտի շնչեն, ամէն օր հայրենիքին ձայնը պիտի լսեն, իսկ այդ ձայնը գիրենք պիտի պահէ շարունակ հայ ցաւերու արձագանգովը ու մշտա՛վառ վրէժով մը լեցուն: Գործ պէտք է տալ, ու հոն ունենալ անտեսապէս ու բարոյապէս օժտուած բազմաշատ հայ գաղութ մը: Հանգուցեալ Մ. Աւետիսեան կը խորհէր Սալմաստի մէջ արհեստանոցներ հաստատել եւ իր ժամանակի քիչտը գաղթական երիտասարդներուն արհեստ սովորեցնել, արհեստով զբաղեցնել եւ երկրին արհեստը ծաղկեցնել: Այժմ այդ պահանջը շատ ու շատ զգալի է. բազմաթիւ անգործ թափառողներ կան, երկրին բերքերը առատ են, միայն կը մնայ օգտակար ձեռնարկները որ շահագործեն զանոնք: Ամերիկայի մէջ այս ու այն արհեստի մէջ կատարելագործուած երիտասարդները, փոխունակ Ամերիկայի մաշիչ գործարաններուն մէջ տանջուելու, կրնան հոն արհեստանոցներու տէրեր, գործատէրեր ըլլալ: Անշուշտ հայ վրամատէրն ալ իր դերը պիտի

ունենայ, այնտեղ իր դրամը չի կորսնցնէր ան, ընդհակառակը մեծ գործ մը կատարած կ'ըլլայ Հայաստանի ափին մօտ գործ ստեղծելով Հայուն համար:

Գործ ու զպրօց, ահա՛ երկու անհրաժեշտ պէտքերը զորոնք ներկայիս պէտք է ստեղծել, Պարսկահայուն բարւոք ապագայ մը պատրաստելու համար:

Վ. ՇԱՀԷՆԻ

Վ Ե Ր Զ

ՄԵՆԱՌՐԻ ՄԸ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Լոնտոն, 7 օգոստոս 99

Սիրելի՛ Գրիգոր,

Ձարմացած կը հաղորդեմ թէ Պոլսէն առած նամակներու մէջ սպիտակութեան պայծառութեամբ կը փայլին հանրածանօթ երկու եպիսկոպոսի դէմքերը որոնք երբեմն սեւաներկ կը ներկուէին: Գոյները իրարու շփոթող աչքի հիւսնալուծեան մը վրայ յուլիս ՉՏին քեզի գրածս յիշելով, կը հարցնես թէ քսա՛ն տարի առաջ մեր հասարակութեան աչքը տալգօնականութեամբ ակտաւոր էր թէ մեր օրերը, ան առեւնը ճերմակը սեւ կը տեսնէր թէ հիմակ սեւը ճերմակ: Կարծի՞քս: Ճշմարտութիւնը փնտռել ուզողին համար հանրութեան աչքը շատ ապահով հայեակ մը չէ: Այդ աչքը ամբոխինն է, ու ամբոխին ինչ ըլլալը գիտնալու ես. եւ եթէ չիյտես հարցո՛ւր Տակիտոսին կամ Չօլային: Թէ՛եւ հոռոմայեցի պատմագիրը Ֆրանսացի ընկերաբան վիպասանէն բազմաթիւ վարեր կ'անջրպետեն, բայց ո՛չ ժամանակը, ո՛չ հեռաւորութիւնը ամբողջ ամբօխէն կ'անջրպետեն: Ինչ որ էր հեթանոս ամբօխը 300ին Հոռոմ, նոյնն էր քրիստոնեայ ամբօխը 1897ին Բարեզ: Ամբօխը բնաշրջումի օրէնքին չ'ենթարկուիր: Գունաս քիչէն շատ հասկցիր, ու ես քու միտքը ուրիշ ուղղութեան մը մէջ առաջնորդեմ «ի խոյզ եւ ի խնդիր» ճշմարտութեան:

Անշուշտ դիտած ես թէ երբեմն —կամ շատ անգամ— մենք չենք այն ինչ որ ենք. ուրիշները մեզի կ'ընեն ինչ որ կ'երեւինք: Յատկութեան մը համար, որով օժտուած չենք, տրուած զովասանքը կը պարտաւորէ մեզի, տկար մահկանացուներս, արժանանալ մեր վայելած համբաւին: Խեղացի ծնողքները բնագոյով ըմբռնած են հոգեբանական այս ճշմարտութիւնը: Նեղ պարագայի մը, մանաւանդ երբ հիւրերու քով զաւակնին երես պիտի սեւցնէ, կը վերադրեն անոր յատկութիւններ որոնց ճիշդ ու ճիշդ հակառակը հրապարակելու վրայ էր: «Իմ տղաս խելօք է, անանկ բաներ չ'ընեք. վարդ կը հոտի. աղա, պէյ, փաշա է.» ու մանուկը կը զսպէ լացը, եւ հրեշտակ կը վառնայ: Տարի-

քոսներն ալ մեծցած մանուկներ են, բայց բնութիւնը չէ մեծցած. ան ինչ որ էր ան կը մնայ: Երբեմն կը մտածեմ որ մեր տղոց հետ ալ — որոնք հանրային պաշտօնեայ կը կոչուին — եթէ անգամ մըն ալ փորձէինք վարուիլ այնպէս ինչպէս խելացի ծնողքը զակին հետ, արդեօք հրեշտակներ պիտի չտեսնէինք զանոնք: Ենթադրէ թէ Օրմանեան եպիսկոպոսը պատրիարք եղած օրէն աշխարհիս բոլոր Հայերը համաձայնութեամբ զինքը միաշուրթն հոչակէին հայկական գատին ակոյեանը, գերագնաց քան Խրիմեան, Ներսէս, Իզմիրլեան, հաւանական չե՞ս գրտներ որ Օրմանեան մինչեւ հիմակ Երուսաղէմ ի շարս մարտիրոսներու զաստորուած կ'ըլլար: Եւ որովհետեւ հանրային բարբառին ազդեցութեանը վրայ կը խօսիմ, յիշեցնեմ ժողովրդին մէկ համոզումն ալ. « Խելօքին քառսուն օր որ խենդ ըսես կը խենդենայ: » Ու զուցէ մեր պատրիարքներուն խենդեցումին մէջ քառսուն օրուան ազդակն ալ իր բաժինը ունի:

Այս բոլոր կտոր բրդուն կարծիքներս երբ իրարու բոլ բերես կրնաս տարակուսանքներու որչափութիւնը գուշակել: Բայց ինչո՞ւ միտք յոգնեցնել հինէն ու նորէն ճշմարտութիւն փնտոելու համար: Էին ինչ որ էին. հիմա ազգին այս հիւանդ օրերուն ատոնք կրնան նմանիլ բանաստեղծին երգած ձօրը որուն մարդկային բոլոր տգեղութիւնները կը մոռցուին, իր վտանգաւոր հիւանդ զակին համար ցոյց տուած անձնութեամբը: Ամէն օրուան շարիքը իրեն կը բաւէ ըսուած է. « Բաւ է աւուրն շար իւր ». օրուան բարիքն ալ կարծեմ թէ ձեռք կուտայ, եւ շատ իսկ է:

**ՄԵՆԱՌՐԸ**

Լոնտոն, 10 օգոստոս 99

**Միրելի՛ Գրիգոր,**

Պոլիսը ձգելէ՞ ի վեր չեմ կրցած ուշադիր հետեւիլ մեր երկու մենաստաններուն հրատարակութեանցը: Գիպուածով միայն Բագմալեպին ու Հանդէս Ամսօրեային մէյլերը թիւերը երբեմն երբեմն ձեռքս կ'իյնային: Ու հիմակ է որ հանդարտութեան մէջ կը յուսամ հետամտիլ Մխիթարեանց մտքի բնաշրջումին հանգրուաններուն: Այդ վանականները ընելիք գեռ շատ բան ունին, ու իրենց հրատարակած Հանդէսներէն զատելով կրնամ գուշակել թէ պիտի ապրին, վասն զի մտքով նստուել չեն: Իրաւ է որ հեւիհեւ վազքով չեն յառաջիմեր, տոտիկ տոտիկ կը քայլափոխեն, բայց կը քայլափոխեն եւ կ'ընթանան:

Այսօր քեզի կը խրիմ Բագմալեպին քանի մը թիւերը որոնք եթէ կարգաւ ինծի համակարծիք պիտի գտնուիս: Տանթէն աշխարհաբար կը թարգմանուի, ահա՛ մեծ քայլափոխը: Տասը տարի առաջ վենետիկի մխիթարեան մը աւելի զիւրութեամբ պիտի հաւտար շրջանակին քառակուսիին օր մը գանուելու հնարաւորութեանը քան թէ Ս. Ղազարի մամուլէն հոյակապ բանաստեղծութեան մը աշխար-

հաբար թարգմանութեամբ հրատարակութեանը: Թարգմանիչը երիտասարդ վարդապետ մըն է — կ'ենթադրեմ թէ երիտասարդ է, վասն զի անձամբ ինծի ծանօթ չէ, Հ. Արսէն Ղազիկեան: Թարգմանութեանը շա՛տ հաւնեցայ. կորովայիբ ներդաշնակութեան միաձուլ զանգուած մըն է: Ամէն մէկ տողը, ինչպէս կ'ըսեն, կապարէ գընդակի մը պէս դուրս կը ժայթքի: Իրաւ է որ իմ ու բու իտէական աշխարհաբարը չէ, բայց Ռուսինեանի Ռիւյ Պըլան ալ մեր բնական լեզուին կը հակառակի, եւ սակայն մեր վայելած գրական էն մեծ հրճուանքներէն մէկն ալ անոր պարտական ենք: Բանաստեղծութիւնը ազնուատոհմիկ է, ուստի եւ մենաշնորհեալ:

Չեմ գիտեր թէ այս անգամ վենետիկէն Երկնային կատակերգութիւնը ամբողջապէս թարգմանուած պիտի ունենանք: Մխիթարեանները Տանթէի երկու գրաբար թարգմանութիւն ունին: Հ. Գաւթի վ. Նազարեթեանէն հատուածներ հատորի մը մէջ ամփոփուած են. իսկ միւսը ամբողջապէս ձեռագիր մնացած է: Քանի մը տող ալ Բագրատունին հայացուցած է, զժոխքին համբաւաւոր վերնազիրը: Ու Ալիշան բանաստեղծի էն սարսուղեցեցիկ ներշնչումէն մզուեցաւ այն բուպէին որ տրամութեամբ զեղուն երկու տողերը « Աղիտաւոր Բաղբին »՝ Անիի աւերակներուն պատկերին վրայ զրոշմեց իր մեծ Աշխարհաքրութեան մէջ: Չեմ գիտեր ինչ մը կայ որ կը կաշկանդէ Մխիթարեանները Դժոխքին ամբողջ հրատարակութեանը համար: Քաղաքակա՛ն, կրօնակա՛ն թէ գեղեցկատիբական նկատողութիւն: Գուցէ երեքը մէկտեղ: Տանթէ շատ փափկանկատ չէ գանուած արապ Մարգարէին համար. ու տող մը կայ որ անախորժ բառախաղի տեղի կուտայ. « Բաքէ սատան, բաքէ սատան աչիրքե »՝ բաք է սատան կը կարգան շարածնները. բայց մեր հիմակուան հնչումին եւ ուղղագրութեան մէջ բարեբազդութիւն մըն է իրենց համար որ « բաքէ » « Պապ է » չենք գրեր:

Թերեւս գեղեցկասիրական խղճահարութիւնները աւելի ազդեցելի ըլլան: Բագրատունին Դժոխքին « խենդ ու խելառ ելեւեջները » չէր սիրեր: Հելլէն-Հոմէական գեղեցկութեամբ սնած ու մեծցած ճաշակին շատ ախորժելի չէր Տանթէի տեսակ մը բովանդակեց բանաստեղծութիւնը. — ինչպէս եւ Գորնէյլը, որմէն բան մը չառաւ ողբերգութիւններու թարգմանութեան մէջ: Բագրատունին անուայ թաք տաղանդը խորտուբորտ հանճարէն նախապատիւ կը համարէր: Կարծեմ թէ կեանքին վերջին ամիսները յօժարակամ կ'երեւէր Տանթէն թարգմանելու, երբ մահը մէկէն ի մէկ հասաւ:

Արսէն անունին բարեխօսութեան ներքեւ ապաստանող Հ. Արսէն Ղազիկեան չեմ կարծեր որ Բագրատունիին գրական խղճահարութիւններուն ալ ժառանգորդը ըլլայ: Միայն մաղթենք որ աշխարհաբարին Հ. Արսէն Բագրատունին ըլլայ:

**ՄԵՆԱՌՐԸ**

ՌՌԻՍԻՈՅ

ԾԱՅՐԱՅԵՂ ՍՊԱՌԱԶԻՆՈՒՄԸ

Այս վերնագրին տակ, «Նայեթիերն Սեկըրի» անգլիական մեծ հանդեսը իր օգոստոսի քիշին մեջ անգլիացի մարեշալ Սրբ Լինկոլնի Սիմոնի մեկ յօդուածը հրատարակեց, որ մեծ ուշադրութիւն գրաւեց եւ զոր մեկը ալ կարեւոր կը համարուէր և երկայացնէր մեր ընթերցողներուն:

Յայտնի է թէ Ռուսիա իր գինուորական ոյժը աւելցնելու վրայ է Ֆինլանտայի մէջ եւ այլուր նոր զօրք հանելով, թէ զեռ վերջերս Գ միլիոն ոսկի յատկացուց նաւատորմը աւելցնելու համար, եւ թէ բոլոր ուժովը կ'աշխատի այժմ գինուորական երկաթուղիներ շինելու, մասնաւորապէս Սիպերիայի մէջէն մինչեւ Վլատիկոպոլը, և Մանչուրիոյ մէջէն մինչև Բորդ-Արթիւր և Նիու-Չվանկ, զանոնք մինչև Բէլքին երկարելու զիտաւորութեամբ:

Անդրսիպերեան մեծ գիծը, — որ առաջ պարզապէս Վլատիկոպոլի եւ 1893ին գոյութիւն ունեցող ու Սիպերիան Եւրոպական Ռուսիոյ միացնող երկաթուղիներուն միջև գտնուած ցամաքային ճամբուն սեղը պիտի բռնէր, — 56 միլիոն ոսկի ծախքի մը կը կարօտէր, 4,695 մղոն նոր երկաթուղիի շինութեան համար, ասոր մէջ հաշուելով նաեւ, ինչպէս կ'ըսէր պաշտօնական տեղեկագիրը, պէտք եղածին չափ վաւիճ «որպէս զի կարելի ըլլար 24 ժամուան մէջ երեք հատ գինուորական կառախումբ կազմել», ու 2 միլիոն ոսկիէն աւելի գումարի մըն ալ՝ երկրորդական աշխատութեանց համար: Երբ ի նկատ առնենք կլիմային խտութիւնը եւ ժողովրդին քիչտրութիւնը, ինչպէս նաեւ ահագին պետերը որոնց վրայէն անցնելու է եւ ճարտարագիտական շատ ծանր դժուարութիւնները որոնք կան գծին զանազան կողմերը, մասնաւորապէս Պայքալ լճին մօտ, ակներեւ է թէ ճամբը յիշեալ գումարներէն շատ աւելի պիտի ըլլայ:

Անկից ի վեր առաջադրուած գիծերը որոնք անդրսիպերեան երկաթուղին Մանչուրիոյ մէջէն պիտի միացնեն Բորդ-Արթիւրի եւ Նիու-Չվանկի, մէկ քանի միլիոն ոսկիի նոր ծախքի մը պիտի կարօտին, եւ եթէ մինչև Բէլքին երկարած զոյն, այդ նոր ծախքը 20 միլիոն ոսկիէն աւելի պիտի ըլլայ քան թէ սլակաս:

Ռուսիոյ ելմտական նախարար Պ. Վիդգէ, տեսնելով որ դժուար է զրամ ձեռք բերել Ֆրանսայէն կամ Եւրոպայի ուրիշ երկիրներէն, շատ կը ցանկայ անգլիական զրամազլիին աշակցութիւնը ձեռք ձգել, անուանապէս՝ առեւտուրին օգտին եւ բարգաւաճմանը համար, մինչդեռ իրօք զրամազլիի պէտքը հետեւանքն է այն ծայրագոյն ճիգերուն որով Ռուսիա այժմ կ'աշխատի այդ եւ ուրիշ գինուորական երկաթուղիները ամբողջացնելու եւ իր նաւատորմը աւելցնելու՝ կարելի եղածին չափ շուտ:

Նաւային յաւելումը պաշտպանութեան համար չէ, քանի որ յայտնի է թէ ոչ մէկ ծովային պետութիւն կըրնայ Ռուսիոյ դէմ պատերազմի մէջ նաւային գործողութիւններով այնքան ծանր վնասներ հասցնել անոր որ զանի ստիպէ հաշտութիւն խնդրելու. գալով Վլատիկոպոլի կամ Բորդ-Արթիւրի, թէպէտ այդտեղ գտնուող նաւերը կրնան վնասուիլ ծովուն կողմէ ուրակոծութենէ մը, բայց չեն կրնար գրաւուիլ առանց գինուորական ահագին ոյժի մը զոր սակայն ոչ մէկ եւրոպական պետութիւն կարող է պահել այդտեղ, իր ծովեզերքէն եւ նաւարաններէն այդքան հեռու: Ճարոնի համար ատիկա շատ ծանր ձեռնարկութիւն մը պիտի ըլլար, մանաւանդ երբ նկատենք թէ ձմեռը այնքան խիստ է որ պատերազմական գործողութիւնները ընդհանրապէս ամբան մէկ քանի ամիսներէն անդին չեն կրնար տեսիլ:

Կարելի է թելադրել Ռուսիոյ ելմտական նախարարին որ նաւատորմին յաւելմանը՝ յատկացուած Գ միլիոն ոսկին շատ աւելի օգտակարապէս կրնայ գործածել առեւտրական ձեռնարկներու զարգացմանը, կամ թեթեւեղելու Եւրոպական Ռուսիոյ մէկ քանի մեծ նահանգներու խեղճ բնակիչներուն թշուառութիւնը, — ուր սովը մէկ քանի տարիէ ի վեր քիչ շատ կը տիրէ, եւ ուր ժողովուրդը հիմա հազարներով մեռնելու վրայ է աւտօր հետեւանքներէն:

Կարելի է միանգամայն մասնանիշ ընել ամենայն ճշմարտութեամբ թէ Ռուսիա այնքան ընդարձակ է, թէ Մոսկուայի (որուն զրաւուժովը միայն կարելի է Ռուսիան հաշտութիւն խնդրելու բռնագատել) պէս կարեւոր կեդրոններու հեռաւորութիւնը այնքան մեծ է, թէ իր ապրուստի աղբիւրները այնքան ցանուցեր են եւ կլիման այնքան խիստ, որ ոչ մէկ պետութիւն կ'ուզէ իրեն վրայ յարձակիլ, եւ, Նաբուլէնի պէս, իր բանակները նմանօրինակ անէպցման մը վտանգին ենթարկել. հետեւաբար, գինուորական բարեբաղդաբար չափաւոր ոյժ մը զինքը կատարելապէս ապահով կը կացուցանէ ցամաքի կողմէ ո եւ է յարձակման դէմ: Ասիկա ճշմարիտ է զինքը Եւրոպայի մէջ շրջապատող բոլոր պետութեանց համար (Շուէտ, Գերմանիա, Աւստրիա-Հունգարիա, Ռումանիա), ինչպէս նաեւ Ասիոյ մէջ իրեն զրացի պետութեանց համար (Թիւրքիա, Պարսկաստան, Աֆղանիստան, Չինաստան եւ Հնդկաստան): Ռուսիա, հետեւաբար, բացառիկ կերպով բաղդաւոր է իր պաշտպանողական ուժին կողմէ, որովհետեւ աշխարհիս մէջ ուրիշ ո եւ է պետութենէ նուազ վախ ունի ցամաքային արշաւանքէ մը: Եւ, առանց ո եւ է տարակոյտի, եթէ իր պաշտպանութեան համար հարկ եղած միջոցները միայն և միայն յարձակում մը կրելու հաւանականութեան եւ կարելիութեան վրայ չափուած ըլլային, Ռուսիա միակ մեծ պետութիւնն է որ կրնար իր գինուորական ոյժը մեծապէս նուազեցնել առանց ամենադոյզն վտանգի:

Ան առնն բնականաբար սա հարցումը մէջտեղ կ'ելլէ. ինչո՞ւ Ռուսիա իր բանակը եւ իր նաւատորմը այնքան ա-

հեղջորէն աւելցնելու վրայ է ճիշդ այն միջոցին ուր Չարը ոգի ի բոխն կ'աշխատի ամբողջ աշխարհի պետութիւնները համոզելու խաղաղութեան ազաւելութեանց մասին, եւ անոնց հասկցնելու թէ հարկ է այլ եւս չաւելցնել իրենց զինուորական ոյժը, որուն պահպանումը գրեթէ անտանելի բեռ մըն է իրենց ժողովուրդներուն վրայ: — Պատասխանը սա է թէ Չարը թէպէտ Ռուսիոյ կառավարութեան անուանական զուլն է, եւ անտարակոյս անկեղծ է խաղաղութեան համար իր բաղձանքներուն մէջ, սակայն իրօք գործիք մըն է անոնց ձեռքը որոնք, անոր սանձը ձեռուրնին առած, որոշած են կայսրութիւնը ընդարձակել մէկ քանի կողմէ՝ նոր երկրկայութիւններով, եւ, ընդհանրապէս խօսելով, իրենց անձնական օգտին համար: Չինաստան, իր զտոմութեանը հետեւանքով, իրենց ուշադրութեան անմիջական և զխաւոր առարկան է: Չինաստանի մէջ Ռուսիոյ ոյժը այժմ կը բաղկանայ իբր 120,000 զօրքէ, որոնք անբողջ հոն տարուած են ծովու ճամբով, եւ որոնք բոլորովին ծովէն կախում ունին՝ նորոյժերու և հրացանի ուղղամտութեան և պաշարի առաքման համար, որոնք այժմ մեծ քանակութեամբ հոն փոխադրուելու վրայ են կարելի եղած արագութեամբ. ատու, Ռուսիա կը յուսայ եւ մտազիր է իր զիրքը պէտք եղածին չափ ամրապնդել այնտեղ և զիմանալ մինչև որ անդրսիպերեան երկաթուղին աւարտի: Երբոր ասիկա լրանայ եւ Մանչուրիոյ մէջ պատերազմական գործողութեանց զինուորական խարխուր ամբողջ հաստատուի, Չինաստան — բացի եթէ ուս զօրքերուն զէմ ելլելու կարող զինուորական ոյժ մը կազմակերպած ըլլայ մինչև այդ ատեն — ուս կայսրութեան գերիշխանութեան տակ պիտի մտնէ, եթէ մեծ մասամբ Ռուսիոյ մաս չկազմէ այլ: Ո՛չ Անգլիա, ո՛չ եւրոպական ուրիշ պետութիւն մը կրնան Ռուսիոյ ճիգերուն այս ընթացքը կասեցնել: Չինաստան Եւրոպայէն այնչափ հեռու է որ ոչ մէկ պետութիւն կրնայ ձեռնարկել զինուորական այն գործողութեանց որոնք անհրաժեշտ են՝ Մանչուրիայէն Բէքին եւ անկից Եանկցէի հովիտը քալող ուս բանակին յառաջխաղացութիւնը արգելելու համար: Չինաստան միայն կրնայ արգելել ատիկա՝ եւրոպական սկզբունքներու համաձայն բանակ մը կազմակերպելով. բայց ժամանակ կորսնցնելու չէ իր կայսրութիւնը ուժովցնելու, որովհետեւ, երբոր անդրսիպերեան մեծ գիծը լրանայ եւ սկսի բանիլ Մանչուրիոյ մէջ, ուսական բանակը, որ այժմ 120,000 հոգիէ կը բաղկանայ՝ որոնց շատը կ'աշխատին կը գործեն այդ նահանգին մէջ, այլ եւս ծովէն կախում պիտի չունենայ՝ հաղորդակցելու համար իր Եւրոպայի խարխուխն եւ զինարաններուն հետ:

Եւրոպական Ռուսիոյ հետ երկաթուղիով հաղորդակցութեան այս գիծը շատ երկար պիտի ըլլայ, եւ շատ ալ նպատակալարմար պիտի չըլլայ՝ պատերազմի բռնուած ահագին բանակի մը պէտքերուն համար, բայց տրուած ամէն տեղեկութեանց նայելով, Մանչուրիոյ նահանգը այնքան հարուստ է իր բերքերով որ մեծապէս պիտի բաւէ բանակին պէտքերուն, մանաւանդ երբոր բարեկարգուած

վարչութեան մը ներքեւ գտնուի:

Ճարոն, որ իբր նաւային եւ զինուորական պետութիւն մը կարող է գործել ուս բանակին կոնակէն կամ կողէն, կրնայ մեծապէս չէզոքացնել այդ բանակը որչափ ատեն որ, ինչպէս հիմակ, ծովէն կախում ունենայ ան, և վարանիլ տալ Ռուսիան՝ Բէքինի վրայ բարելէ առաջ: Եթէ Ճարոն մեծ բանակ մը ցամաք հանէ Գորէլայի մէկ հիւսիսային նաւահանգիստը, — բան մը զոր շատ զժուար պիտի ըլլար արգելել, — ուս բանակը շատ ծանր մտահոգութեան պիտի մատնուէր եթէ ասզին Չինաստանի մէջ զբաղած ըլլար Բէքինի կողմը, Բորդ-Արթիւրէն եւ Թաւիէնդանէն այնչափ հեռու:

Եզրակացութեան մը հասնելու համար թէ Չինաստան ո՛րչափ ատեն ունի իր առջին կազմակերպուելու համար, մինչդեռ Ռուսիա տակաւին ծովէն կախում ունի նոր ոյժերու եւ պաշարի առաքման համար, քննենք համոտակի մեծ երկաթուղին զոր լրացնելու համար ոգի ի բոխն կ'աշխատի:

1893ին հրատարակուած ուս պաշտօնական տեղեկագիր մը համաձայն Չէխիպինսքէն (Ռուսիոյ ներքին երկաթուղիներուն ծայրաշոյն կէտը) Վլատիվոսոքը (որ ան ատեն չինական ջրերուն մէջ Ռուսիոյ միակ նաւահանգիստն էր) շինուելիք գծին երկարութիւնն էր 4684 մղոն: Այս ձեռնարկութիւնը, որով Ռուսիա երկաթուղի մը պիտի ունենայ ամբողջովին իր երկրին մէջ եւ բոլորովին ապահով ո եւ է պետութեան մը՝ ի բաց առեալ Չինաստանի՝ յարձակումէն, Ատլանտեանի ուսական ծովեզերքը իր խաղաղականի արեւմտեան ծովեզերքին պիտի միացնէ: Սքանչելի ու հոյակապ աշխատութիւն մըն է ասիկա, որ մեծ տեղ մը պիտի բռնէ դարուս ճարտարագիտական մեծ ձեռնարկութեանց մէջ, բայց վայրկեան մը իսկ մտքէ անցնելու չէ թէ վաճառականութեան զարգացմանը համար կը շինուի: Գիծը (որ զոյգ չէ) զժուար, լեռնոտ ու սաստիկ կլիմայով երկրի մը մէջէ պիտի անցնի, որ տեղ տեղ շատ քիչ անգամ զերծ է սառոյցէ և ձիւնէ, որուն վրայ ընդարձակ տարածութիւններ անապատ են, եւ որ մշտնջենապէս ստոած հող մը ունի: Պիտի անցնի բազմաթիւ մեծ գետերէ որոնք աւելի քան 3000 ոտք երկայնութեամբ կամուրջներու պէտք պիտի ունենան, եւ մէկ քանի հազար մղոն տեղ՝ երեք տարուան բարեխառնութեան միջինը տարուան մէջ մէկ քանի ամիս միայն զերօյն վեր էր: Այս հիւրամերձ երկրին մէջ, բարեխառնութիւնը՝ իր երկայնութեան մէկ մեծ մասին վրայ՝ սառելու աստիճանէն 5 վար է, եւ շատ տեղ արեւուն ճառագայթները, տարուան էն տաք եղանակին, հազիւ հողին մակերեւոյթէն մէկ քանի բութամատ ներս կը թափանցեն:

Երկաթուղիին հետ կապակցութիւն ունեցող ամբողջ բնակչութեան թիւը 1,520,000ի հազիւ կը հասնի, որ Պիրմինկհէմի, Լիվրբուլի եւ Մանչէսթըրի միացեալ բնակչութեան պակաս է (իրջուցքի եւ Վլատիվոսոքի միջեւ, որ 3000 մղոնէն աւելի է, ամէնէն մեծ քաղաքը 13,000 բնակիչ միայն ունի), եւ ընդարձակ երկիրը ուր կը բնա-

կին, աւելորդ է ըսել, բոլորովին զուրկ է ո եւ է կարեւոր գործարնանէ: Այն իրողութիւնները, որոնք ուս պաշտօնական աղբիւրներէ քաղուած են, ցոյց կուտան ելմտական ապագան երկաթուղիին որով պիտի փոխադրուին Քորդ-Արթիւրի պահակագործը եւ Մարչուրիոյ գրաման բանակը, ինչպէս նաեւ այն բանակը որ սահմանուած է Բէքինը գրաւելու որ ատեն որ Ռուսիա յարմար դատէ (երկաթուղիին լրացումէն յետոյ) զիմակը մէկդի նետելու եւ Բէքինը ու Չինաստանի մէկ մեծ մասը գրաւելու, բացի եթէ մինչեւ այդ ատեն Չինաստան բանակ մը մարզած ու կազմակերպած ըլլայ երկրին պաշտպանութեանը համար, — ու այդ բանակին նիւթեղէնը արհամարհուելիք բան մը չէ, ինչպէս տեսնուեցաւ Կորտոն զօրավարին առաջնորդութեան տակ գանուող չինացի զօրքերուն գործերէն: Այս մեծ երկաթուղիին կը յուսացուի որ հինգ տարիէն աւարտի, 1904ին, թէպէտ, ի նկատ առնելով աշխատութեանց եւ երկրին, մասնաւորապէս Պայքալ լճին շուրջը, հանգամանքները, հաւանօրէն այդչափ կանուխ չլրանայ: Հետեւաբար այս հինգ տարին Չինաստանի համար շունչ առնելու ժամանակն է, իր պաշտպանողական պատրաստութիւնները տեսնելու եւ բանակ մը կազմակերպելու:

Եթէ Չինաստանի մէջ Ռուսիոյ նպատակը յարձակողական չըլլար, այլ զուտ առեւտրական, այս մեծ երկաթուղիին շինութեան պատճառած ահագին ծախքը անօգուտ պիտի ըլլար. Չինաստանի հետ իր առուտուրը ծովու ճամբով շատ աւելի զիւրաւ և ածան կրնայ փոխադրուիլ քան ցամաքի ճամբով. եւ նոյն իսկ եթէ երկաթուղին լրանայ, տարակուսական է թէ Արեւմտեան Ռուսիոյ և Մանչուրիոյ միջեւ առուտուրը պիտի կրնայ տանիլ մէկ քանի հազար մղոն ճամբայ երկաթուղիով փոխարութեան ծախքը, նկատելով մանաւանդ որ երկաթուղին կ'անցնի աշխարհիս ամէնէն ամայի մէկ երկրէն, ուր զիծը պահպանելու եւ բանեցնելու զժուարութիւնները եւ ծախքերը անսովոր կերպով խոշոր պիտի ըլլան: Ինչ որ ալ ըլլայ, ակնհար է թէ ո եւ է շահաբաժին պիտի ձեռք չբերուի ու ո եւ է եկամուտ չսպասուի այդ ահագին ծախքէն, որ պարզապէս զինուորական նպատակով եղած է եւ մշտական բեռ մը պիտի ըլլայ կառավարութեան վրայ:

Եթէ Չարին կառավարութիւնը իր զօրքերուն թիւը վերածէր այնքանի միայն որքան պէտք է պաշտպանողականի, եւ ո՛չ յարձակողականի համար, մեծ բարիք մը ըրած պիտի ըլլար աշխարհի, եւ զրացի պետութիւններն ալ, որոնց վրայ ուսական մեծ բանակը թանձր ստուեր մը կը ձգէ, հաւանօրէն պիտի պակսեցնէին իրենց զինուորական ոյժը, փոխանակ ստիպուած ըլլալու ահագին ճիզեր ու սպառազինութիւններ ընելու՝ իրենց պաշտպանութեանը համար:

Այս պահուս Եւրոպական Ռուսիոյ մէջ մէկ քանի նահանգներ սովէ կը տառապին, եւ մեծ զժուարութիւն կայ անոնց նպաստ հասցնելու լաւ ճամբաներու եւ երկաթուղիներու չգոյութեան պատճառաւ: Այդ նահանգներու

ընակիչները մեծապէս պիտի նպաստաւորուին եթէ երկաթուղիի յիշեալ մեծ ծախքին կամ նաւատորմին համար առաջադրուած 9 միլիոն ոսկին մէկ մասը երկրին զարգացմանը յատկացուէր:

Անգլիան եւ ուրիշ երկիրներ ուս կառավարութեան արժէթղթերը գնելու հրաւիրելուն նպատակը ուրիշ բան չէ բայց եթէ միջոց տալ Ռուսիոյ որ կարենայ իր այս զինուորական մեծ ծախքերը վճարել եւ շղթայ մը զարբնել որ Չինաստանը պիտի կապկպէ անքակտելի կերպով: Յուսալի է որ անգլիացի զրամատէրները պիտի ըմբռնեն զօրժին կարեւորութիւնը, եւ իրենց աշակցութիւնը պիտի չնւիրեն այս մեծ պետութեան պատերազմակերպողական քրտութեանց իրականացմանը, — պետութիւն մը որ շատ չանցած պիտի տարածուի Եւրոպայի եւ Ասիայի ամբողջ երկայնութեամբը, 180 աստիճան երկայնութիւն, կամ աշխարհիս շրջանակին կէսը, Հիւսիսային Բեւեռի ծովերէն մինչեւ հիւսիսային լայնութեան 35 աստիճանը:

Մէկ քանի թուանշաններ՝ Ռուսիոյ տարածութեանը զինուորական ուժին մասին, շատ շահեկան են և իր յարձակողական գիտաւորութեանցը յայտարար: Ռուսիոյ տարածութիւնն է Եւրոպայի մէջ 2,095,000 քառակուսի մղոն, 102,627,000 բնակչով (49 հոգի մէն մի քառակուսի մղոնին), մինչդեռ իր ասիական ստացուածքներուն տարածութիւնն է 6,564,000 քառ. մղոն, 19,234,000 բնակչով (3 հոգի մէն մի քառ. մղոնին): Հետեւաբար ամբողջ կայսրութիւնը 8,660,000 քառ. մղոն, 121,863,000 բնակչով (14 մէն մի քառ. մղոնին):

Շուէտի, Գերմանիոյ, Աւստրեհունգարիոյ եւ Ռուսիոյ մանիոյ այսինքն Եւրոպայի մէջ Ռուսիոյ զրացի պետութեանց միացեալ տարածութիւնն է 670,795 քառ. մղոն միայն, 103,790,000 բնակչով (154 մէն մի քառ. մղոնին), որ Եւրոպական Ռուսիոյ բնակչութեան հետ նոյնն է գրեթէ:

Այս սահմանակից պետութեանց խաղաղութեան տեսնի բանակը՝ հաւաքաբար՝ 1,050,000 հոգի է կը բաղկանայ. ասոր գէժ, Ռուսիա 792,000 զօրք կը պահէ Եւրոպա, եւ 77,000՝ իր ասիական ստացուածքներուն մէջ, կամ թէ համագումար 869,000 զօրք, որ պատերազմի ատեն կրնայ 2,000,000 էն աւելի բարձրացուիլ Եւրոպայի մէջ, եւ 130,000՝ Ասիոյ մէջ:

Մարտիտ

**ՍԸՐ ԼԻՆԴՐԸ ՍԻՄՄԸՆԶ**

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ ԲՈՊԱՅԻ ԱՌՁԵՒ

Կանոնիկոս Մաք Քոչի «Մուշրանը եւ Եւրոպական պետութիւնները» աստիճանաբար գործը անգլիերէներ ֆրանսերէնի քարգմանուած լոյս տեսաւ այս օրերս Բարիզ, Իւրպէն Կօլէի մէկ կրակոտ ու պերճախօս յասաչարանով: Ահա առիթ ֆրանսացի մեծ հրապարակագրիէ գրութեան եւ ուշագրաւ մասը:

...Մենք, Ֆրանսացիներս, Ֆրանսայի ընթացքն է որ սր աչքի առաջ ունինք, որովհետեւ ամէն բանէ առաջ մեր հայրենիքին մտրուածութիւններն է որ կը տխրեցնեն մեզի. բայց հին աշխարհին մէջ չկայ երկիր մը որ բազաբար ներքէն այս օրինակ յուսախաբութիւն մը չզգան: Մարդկային խղճի խաւարումը զոր կը հաստատենք մերիններուն թող, միանգամայն միւս ժողովուրդներուն մէջ ալ կը տեսնուի: Քաղաքակիրթ աշխարհին մէկ ծայրէն միւսը, բարոյական մակարդակը իջած է: Ամերիկայի մէջ, Ուաշինկթօնի եւ Ճէֆերսոնի զաւակները, 1776ի վեճմ յայտարարութիւնը մոռնալով, իբր ապստամբ եւ յուզակահար կը կը նկատեն իրենց անկախութիւնը պաշտպանող մարդիկը: Հոսի պապը, որ սիրոյ եւ գթութեան կրօնքի մը քահանայապետն է իբրեւ թէ, բա՛ն մը չգտաւ՝ դաշոյնին տակ ողբիւրդ երեք հարիւր հազար հայ քրիստոնեաներուն ի նպաստ. ամբողջ կաթոլիկ կղերը կարմիր սուլթանին հետ դաւադրեց այլ ժողովրդին բնաջնջմանը համար, ինչպէս Ֆրանսայի մէջ դաւադրեց՝ անմեղ հրեային կողմէն համար: Կաթոլիկ սնանկութիւնը կասարեալ ու նողկալի է: Կարծես ամբողջ մարդկութեան վրայ յետադիմութեան, վատութեան, բարբարոսութեան հով մը կը փչէ:

Պէտք է սակայն որ այս ամօթը վերջանայ:

Երբեք—Քեօշի մարդասպանը հիմակ կը հալածէ Հայերուն մնացորդները եւ Երիտասարդ Թիւրքներուն կուսակցութիւնը, այսինքն օսմանցի ժողովրդին ամբողջ մասը. այս վերջին մէկ քանի տարիներս, յիսուն հազար հոգի ոչնչացուցած է այդ միտիւլմաններէն. արիւնը նորէն կը հոսի: Մպանութեան յիմարութենէն բռնուած, հրէշը կը յարձակի ամէն կրօնքներուն, ամէն ցեղերուն վրայ: Ինչ ինչ նահանգներու մէջ, սով կը կազմակերպէ, բոլոր ցորենը համազրաւելով հանրային շտեմարաններու մէջ՝ որպէս զի վերջէն արժէքին վեցպատիկ գնովը ծախէ: Էրիկմարդիկ անսուղութենէ ոգեսպառ կ'իյնան ճամբաներուն երկայնքը որ զինուորները կը քաշեն կը տանին զանոնք տարհապարհակ աշխատութեանց համար: Կմախացած կիներ իրենց ողորմելի մարմինը թիւրք ու քիւրա զահիճներուն կ'ընծայեն, պատառ մը հացի համար: Քառսուն հազար որք մեռնելու վրայ են, լքեալ: Չարքը, բռնաբարումը եւ հրկիզումը կը վերսկսին:

Արդ, Եւրոպա ա՛լ չի կրնար աչքերը գոցել ո՛չ ալ ականջները խցել, Եւրոպա ա՛լ չի կրնար կեղծել թէ անտեղեակ է: Կը տեսնէ, կ'իմանայ, գիտէ: Անշարժ մնալով, ամօթին մէջ ալ աւելի կը խորասուզի: Մինչդեռ մենք մեր քաղաքներուն մէջ ման կուզանք աղէկ խողանակուած, ապիկուած, շողշողուն, մինչդեռ մեր քաղաքակիրթութեան զեղեցկութիւններուն վրայ կը ճառախօսենք, մեր կառավարիչները բանախօսութիւններ կ'ընեն եւ համամարդկային ժողովներ կը գումարեն, գիտենք թէ մեր դրանը առջեւ զիականքը կը զիգուին եւ ամէնէն ահռելի ոճիրները կը բազմապատկուին: Բայց տեղերնուս չենք երերար. մեր կառավարութիւնները տեղերնուն չեն երերար. Կ. Պոլսոյ գաղանը կը պատուէ եւ կը պղծէ մարդկային միտը, ու մեր վեհապետները կը շարունակեն իբր եղբայր վարուել անսօր հետ. մեր զիւանագէտները եւ մեր նախարարները կը շարունակեն սիրալիր ցոյցեր, պատուանշաններ, զհարեղեններ, շահաբեր ձեռնարկներու արտօնութիւններ ստանալ անկից:

Այս զարհուրելի տուած չափէն աւելի տեսցո՛ւ:

Ողջ մնացած Հայերը եւ Երիտասարդ Թիւրքերը Բնջ կը խնդրեն Եւրոպայէն: Իր յանձնառութիւնները կատարել:

Պերլինի վեհաժողովին մէջ, Եւրոպա յանձն առաւ ի գործ դնել հարկ եղած բարենորոգումները՝ քաղաքակիրթ երկրի մը վերածելու համար Յսմանցիներուն բարբարոս ճամբարը: Այդ բացորոշ խոստումները, ա՛լ իրաջնէ աւտենն է որ ի գործ դրուին: Պէտք է նեղը դնել թիւրք ժողովուրդը, ու միանգամայն իրեն միջոց տալ՝ Եւրոպայի պատուին համաձայն ուղրութիւն մը ընդունելու: Եթէ ոչ, Ապտիլ—Համիտ մարդասպանին ոճիրները նուազ զարշի պիտի երեւան ապագայ սերունդներուն քան իրենց զիրենք քաղաքակիրթ հոշակող պետութեանց վատութիւնը:

ԻՒՐՊԷՆ ԿՕԻԷ

ԼՈՒՐԵՐ

ՉԱՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ. «Թայմզ»ի Բարիզի քղրակիցը վերջերս ցեցողական լուր մը մեքտեղ նետեց, թէ Չարը, յոգնած ու զգուած, մտադիր է հրաժարել, քանի որ կարող չ'ըլլար իր խորհուրդներէն եւ ոչ միև իրագործել:

«Թայմզ»իև հեռագիրը կը շարունակէր սուպես.

«Նիքոլա Բ շատուց է զգուած է գահէն, ոչր արեւնադասն յոսսախարտքիս միայն գտած է: Մեկ օրիակ մը միայն յիշելով, Չարը իր անձնական գանձէն կու միլիոն լուսալի խրկեց Հայերուն՝ աղեղքներուն ատենը, բայց յետոյ քննաքիւն քանալով այդ դրամին գործածութեանը մասին, ստուգեց թէ ատկից մե՛կ կապիկ Հայերուն ձեռքը հասած չ'իւր:»

**ԹԻԻՐՔ ԵԼՈՒՄՈՒՏՔԸ . Կ .** Պոչսեկ կը հեռագրեն «Թայմզ»-ի օգոստոս 14ին .

«Թիւրքիոյ գանձը այս միջոցին բոլորովին պարսպ է, եւ շատ տարիէ ի վեր այսքան նեղը գտնուած չէր : Անսահանները ոչ մէկ տոնէն այսքան դիզուած մնացած էին : Անցեալ շաբթոյ պատերազմական նախարարութիւնը կարող չէր պաշտօնատան մէջ պզտիկ նորոգութիւններ կատարող որմնադիրներուն և աստղագործներուն վարձքերը վճարելու : Դրանական այս նեղութիւնը աստիճան մը հետեւանք է անցեալ տարուան հասոյթներուն նոսր գոտեան, բնյցճգիսաւորապէս կը վերագրուի այն յարսձան գումարներուն զորոնք պաշտօնը առանց կարգի կա՛նոնի պետութեան գանձէն կը քաշէ՝ իր արդի դրութեան պահպանմանը համար : »

**ՊԱՂՏՈՍԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ .** Խմբագրական յօդուածի մէջ խօսած ենք Պաղտատի գծին շինութեան աւրիճմէկ կողմէ անգրօ-գերման խնդիրին, և միւս կողմէ առաւելապարտութեան միջեւ տիրող հակասականութեան մասին : Բեղրպուրի կը յուսացուէր որ Ծրանսա Ռուսիոյ կողմը պիտի յարի, սակայն օգոստոս 14ին Պոչսեկ «Թայմզ»-ին կը հեռագրեն թէ Կ . Պոչսոյ ֆրանսական դեսպան Պ . Բոննարան Պաղտատի գծին համար բոլորովին կը հակասակի Պ . Չիկոմիլիի քաղաքականութեանը եւ կը նպաստաւորէ գերմանական ծրագիրը : Օգոստոս 11 ռաբարօր սուրբանիկէն հետ առանձին ունկնդրութեան մը պահուել, Պ . Բոննարան իր տեսութիւնները պարզեր է, եւ այս շարքու նորէն պիտի տեսակցի : Այս շարքերը բոլորովին կը համապատասխանեն ֆրանսական թերթերուն կողմէ նախապէս հաղորդուած տեղեկութեանց : Բիւրոյի գործակալութիւնն ալ կը ծանուցանէ թէ թիւրք մամուլը Դանկէն հրահանգ ստացաւ դրոշմատանն ու խանդավառ յօդուածներ գրել գերման դրամագիտով Պաղտատի գծին շինութեանը համար :

**ԹԻԻՐՔԻՆ ԵՒ ՌՍԻՍԻԱ .** Պ . Չիկոմիլի վերջին ծանուցագիրը իր ազդեցութիւնը ունեցած է : Ռուսիա եւ Թիւրքիա մէկ մէկ յանձնախոնար պիտի դրկեն ծանակեան սահմանագրուելու՝ քննելու համար Քիւրտերուն կատարած շահատակութիւնները առաւելան հողին վրայ, եւ արգիւնուած համար անոնց կրկնութիւնը : Թիւրք յանձնախոնարը այս շաբթոյ Կ . Պոչսեկ Էրզրում կ'աղբարտի :

Այսպէս Ռուսիա ռազմակի օսմանեան վարչութեան գործերուն միջամտելու առաջին քայլը կ'առնէ :

Նոյն եօթին վրայ Օտեսայէն կը գրեն «Թայմզ»-ի օգոստոս 15 րոշակով .

«Վերջին ամիսները Քիւրտերուն մէկ քանի արշաւանքներ տեղի ունեցան Թիւրքիայէն Կովկաս, եւ Կ . Պոչսոյ առաւելան դեսպանատունը այդ մասին դիտողութիւններ ըրաւ թիւրք կատարութեան . բայց վերջերս 300ի չափ թիւրք ճիւղերներու կատարած մէկ յարձակումը սահմանապահ առաւ գործերուն վրայ, առաւ կատարութեան շարք ռազարութիւնը զարձուցած կը թռչի դէպի այդ շարքը : Վերջերս Կարսի և Երեւանի կողմերը

ձամբորդած միջոցիս քաղած տեղեկութիւններս ցոյց կուտան թէ Կովկասի մամուլը չէր չափազանցեր երբոր կ'ըսէր թէ գոյութիւնը եւ մարդասպանութիւնը սովորական դէպքեր զարձած են առաւելութիւնը եւ առաւելապարսիկ սահմանագրուելներուն վրայ, այնքան որ իշխանութիւնները անկարող կը թռչին կամ չեն ռզկեր այս սպօրիւնութեան դեմ մարտի, եւ ձամբորդները, ինչպէս նաեւ հայրնատ տեղացիները իրենք կը հոգան իրենց ռազմեցող զինեալ խոնար մը երբոր քաղաքներէ դուրս կ'ելլեն :

Այսօրուան «Օտեսայի Լիւրը» կը պատմէ թէ շաշիկուած Պախիկներուն ռաբիշ խոնար մը Արարքը անցնելով, շատ մը աշարաւորութիւններ գործեր եւ Երեւանքի գաւառակին մէջ սուրհանգակը կողոպտեր է :

Սահմանագրիս արշաւանքներէն առաջ գալիք են մեծ վտանգը այն է որ Ռուսիա ռզգած տոնէր պատրուակ մը պիտի նկատէ առանց զօրք դրկելու համար իր Կովկասի սահմանակից երկիրները . եւ անոնք որ ծանօթ են Ռուսիոյ առիակին քաղաքականութեան, պիտի հասկնան անցեալին մէջ Ռուսիա ի'նչպէս շաշ գիտցած է օգոստոսի այդ պատրուակներէն՝ իր հողային ընդարձակման դիտաւորութեանը ծանայեցնելու համար : »

**ԿՍՅՍ . ՇՆՈՐՀ .** Վերջապէս իմացանք թէ ի'նչ են եղեր ի ձայն փողոյ եւ քրկի հոշակուած «կայսերական ընդհանները» զորոնք սուրբանը պարգեւեր է հայ ազգին յոշիս 11ին, երբ մասնաւոր հրաւերով պաշտօն կանչեց Օրմանեան պատրիարքը եւ Տատեան փայլան : Արևաշի վանքին և Մոշի Ս . Կարապետի յետմեալ տոնքերը չպիտի պահանջուին : Այ ի'նչ կ'որոգ հայ ազգը :

**ՀԱՍՅԷ ՈՒ ԲԱԺՆԵՐԻՆ**

**ՆՈՐ ԿԵԱՆՔԻ** վերաբերեալ նամակ ու բաժնեցի ղրկել առ

L. FRANK,  
32, CHESTERTON ROAD,  
(ENGLAND) LONDON, W.

**ՆՈՐ ԿԵԱՆՔԸ** կը հրատարակուի ամէն շաբաթ 1 ին և 15ին : Բաժնեցիներն է Երասպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 եւ վեցամսեայ 1 տոլար :